

## **ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄՆԵՐԸ ԵՎ ԼՂՅ-Ն Գազիկ Տեր-Յարությունյան**

Ակնհայտ է, որ ԼՂՅ տեղեկատվական անվտանգության (ՏԱ) հարցերն ունեն իրենց առանձնահատկությունը, եւ տեղեկատվական պատերազմի առումով՝ հայկական երկրորդ պետությունը գտնվում է ճակատի առաջին գծում: Միեւնույն ժամանակ, հարկ է ընդգծել, որ ԼՂՅ ՏԱ հիմնախնդիրները անհրաժեշտ է դիտարկել ընդհանրապես Յայաստանի ու Յայության ՏԱ համակարգի համատեքստում: ՏԱ թվարկված սուբյեկտների առանձին, տեղայնացված ընկալումը մեթոդաբանորեն սխալ է եւ անարդյունավետ:

Նշենք նաեւ, որ սույն հոդվածում չեն քննարկվում կիբերտարածության (հաքերների գործողություններ եւ այլն) անվտանգության հետ կապված հարցերը: Սակայն հարկ է փաստել այն մեծ ակտիվությունը, որ ցուցաբերում են այսօր ադրբեջանական հատուկ կառույցներն այս ուղղությամբ: Յամակարգչային խափանարարների նպատակը հաճախ պետական կառույցների պաշտոնյաների էլեկտրոնային գրագրությանը հետեւելն է, որը Յայաստանում, ի տարբերություն շատ երկրների, չի գաղտնագրվում եւ փոխանցվում է բաց տեքստով:

### **Առաջին սերնդի տեղեկատվական պատերազմները եւ ԼՂՅ-ն**

Ընդունված է կարծել, թե տեղեկատվական հոսքերը լինում են երկու տեսակ.

1. Տեղեկատվական հոսքեր, որոնք ներկայացնում, լուսաբանում են մարդկության կենսագործունեության այս կամ այն ոլորտները եւ ձեւավորում են գլոբալ տեղեկատվական դաշտը:

2. Տեղեկատվական հոսքեր, որոնք նպատակ ունեն ազդել կոնկրետ հասցեատիրոջ ռազմաքաղաքական, սոցիալ-տնտեսական եւ հոգեւոր-հոգեբանական վիճակի վրա:

Առաջին տեսակի տեղեկատվական հոսքերը, որպես կանոն, առանձնապես չեն վերահսկվում հասարակության եւ պետության կողմից: Այնինչ, դրանք կարող են հայտնի սպառնալիք ներկայացնել, օրինակ, հասարակության (հատկապես ավանդական հասարակության) հոգեբանական եւ բարոյական վիճակի համար: Դրա հետ մեկտեղ, նման հոսքերը կարող են ստեղծել որոշակի տեղեկատվական-հոգեբանական ֆոն, որը կարող է

օգտագործվել երկրորդ տեսակի՝ նպատակաուղղված տեղեկատվական հոսքերի հեղինակների կողմից: Այս համատեքստում, ցանկացած հասարակության (մանավանդ այն հասարակության, որը գտնվում է ռազմաքաղաքական դիմակայության մեջ) տեղեկատվական դաշտը կարիք ունի փորձագիտական դիտարկման եւ անհրաժեշտության դեպքում՝ սրբագրման:

Երկրորդ տեսակի տեղեկատվական հոսքերը, որպես կանոն, համապատասխանում են դասական տեղեկատվական գործողությունների եւ տեղեկատվական պատերազմների սահմանմանը: Հայության/Հայաստանի ներգրավվածությունը մասշտաբային, որոշակի իմաստով՝ գլոբալ քաղաքական գործընթացներին (հատկապես՝ Ցեղասպանության եւ ԼՂՀ ճանաչման համատեքստում), ինքնին վերածում է նրան տեղեկատվական պատերազմների սուբյեկտի: ԼՂՀ պարագայում առավել ակնհայտ եւ հիմնական տեղեկատվական ագրեսոր պետք է համարել, իհարկե, Ադրբեջանին եւ նրա դաշնակիցներին: Միեւնույն ժամանակ, տեղեկատվական հոսքերի վերլուծությունից այնպիսի տպավորություն է ստեղծվում, թե տեղեկատվական պատերազմ ծավալած ադրբեջանական կառույցները որոշակի, մասնավորապես՝ մեթոդաբանական աջակցություն են ստանում թուրքական եւ դաշնակից այլ պետությունների մասնագետներից: ԼՂՀ-ի դեմ տեղեկատվական գործողություններում չի բացառվում նաեւ այդ երկրում տեղակայված խոշոր էներգետիկական ընկերությունների փորձագետների մասնակցությունը: Այս հանգամանքը խիստ կարեւոր է Ադրբեջանի տեղեկատվական ռեսուրսների ճիշտ գնահատման համար եւ առավել հանգամանալի ուսումնասիրության կարիք ունի:

ԼՂՀ-ի դեմ տեղեկատվական գործողությունների հանրագումարը կարելի է բնութագրել որպես առաջին սերնդի դասական տեղեկատվական պատերազմ, որը կոչված է լրացնելու այն գործողությունները, որոնք իրականացվում են Ադրբեջանի կողմից ռազմական, քաղաքական եւ տնտեսական ոլորտներում: Այս համատեքստում, ադրբեջանական կողմի տեղեկատվական հոսքերը պայմանականորեն կարելի է նշել երեք վեկտորներով, որոնցից մեկը ներքին է, մյուս երկուսը՝ արտաքին.

❖ Ներքին վեկտորն ուղղված է ադրբեջանական լսարանին եւ նպատակ է հետապնդում՝ հասարակության մեջ պահպանել Լեռնային Ղարաբաղի մասին հիշողությունը՝ որպես Ադրբեջանի անքակտելի մաս եւ երիտասարդ սերնդին դաստիարակել ռազմատենչության, ռեւանջի եւ հայատյացության ոգով:

❖ Առաջին արտաքին վեկտորն ուղղված է հայ հանրության դեմ եւ

հիմնականում իրագործվում է հոգեբանական պատերազմների ժանրով: Օրինակ, մատուցվում են էներգետիկ կամ ֆինանսական ոլորտների ձեռքբերումները, որոնք համակցվում են ադրբեջանական բանակի անընդհատ հզորացման եւ, համապատասխանաբար, ԼՂՀ-ի, Սեւանի, Երեւանի ու այլ տարածքների նկատմամբ հավակնությունների հետ:

❖ Երկրորդ արտաքին տեղեկատվական վեկտորն ուղղված է համաշխարհային հանրության տարբեր հատվածներին եւ նպատակ ունի ձեւավորել հայկական ագրեսիայից «տուժած» Ադրբեջանի դրական իմիջը, եւ «սեւացնել» այն ամենը, ինչ կապված է Հայաստանի ու Հայության հետ:

Բնականաբար, տեղեկատվական հոսքերի ներկայացված ուղղությունները հստակ սահմանազատում չունեն. դրանք հաճախ սինթեզվում եւ փոխլրացնում են միմյանց: Հարկ է ընդունել, որ իրենց տեղեկատվական գործողություններում ադրբեջանցիները հասել են որոշ հաջողությունների. ներկայումս նրանք օգտագործում են մի շարք քրեստոմատիական մեթոդներ եւ տեխնոլոգիաներ: Այնինչ, հայկական կողմը միշտ չէ, որ համարժեք է պատասխանում այդ մարտահրավերներին, իսկ «պոստֆակտում» ռեժիմով հերքումներն արդյունավետ չեն. այստեղ անհրաժեշտ է համակարգային մոտեցում:

### **Երկրորդ սերնդի տեղեկատվական պատերազմները եւ ԼՂՀ-ն**

Միեւնույն ժամանակ, մեր կարծիքով, ԼՂՀ-ի համար առավել վտանգավոր են այն տեղեկատվական գործողությունները, որոնք իրականացվում են «ՌԷՆԴ» կորպորացիայի մասնագետների մշակած «Երկրորդ սերնդի տեղեկատվական պատերազմների» հայեցակարգի հիման վրա: Երկրորդ սերնդի տեղեկատվական պատերազմները հանդես են գալիս որպես ռազմավարական հակամարտության սկզբունքորեն նոր տեսակ, որոնք «կյանքի են կոչվում տեղեկատվական հեղափոխությամբ, հակամարտության ոլորտների շրջանակ մտցնում տեղեկատվական տարածությունը եւ ժամանակի մեջ ամիսներ ու տարիներ են տեւում...»:

Խնդիրների շարքում, որոնք լուծվում են երկրորդ սերնդի տեղեկատվական պատերազմների օգնությամբ, մասնավորապես առանձնացնենք հետեւյալները.

1. Հասարակական գիտակցության եւ երկրի բնակչության սոցիալական խմբերի քաղաքական կողմնորոշման մանիպուլյացիա՝ լարվածություն եւ քաոս ստեղծելու նպատակով:

2. Կուսակցությունների, միավորումների եւ շարժումների միջեւ քաղաքական պայքարի սրում՝ կոնֆլիկտներ հրահրելու, անվստահություն եւ կասկածամտություն բորբոքելու նպատակով. ընդդիմության հանդեպ ճնշումների սադրում, փոխոչնչացման դրդում:

3. Իշխանական մարմինների տեղեկատվական ապահովման մակարդակի նվազեցում, սխալ վարչական որոշումների մղում:

4. Պետական մարմինների աշխատանքի մասին բնակչությանը ապատեղեկատվության տրամադրում, կառավարման մարմինների վարկաբեկում:

5. Պետության միջազգային հեղինակազրկում, այլ երկրների հետ համագործակցության խափանում:

Վերը թվարկվածը հանգեցնում է այն մտքին, որ որոշակի իմաստով ԶԶ-ն եւ ԼՂԶ-ն արդեն ենթարկվում են «երկրորդ կարգի» տեղեկատվական հարձակման: Նման պատերազմների առավել բնորոշ դրսեւորումներ են այսպես կոչված «գունավոր հեղափոխությունները»: Այդ հեղափոխության օրինակ են, մասնավորապես, այն գործընթացները, որոնք տեղի ունեցան վերջերս, ԶԶ-ում նախագահական ընտրությունների ընթացքում, եւ որոնք անմիջական առնչություն ունեն ԼՂԶ անվտանգության հետ: Որոշ քաղաքական ուժեր, մասնավորապես, լայնորեն օգտագործեցին հետեւյալ կարգախոսները.

❖ «Կորչի՛ դարաբաղյան կլանը». սրանով որոշակի կենցաղային պատկերացումներ բարձրացվեցին քաղաքական մակարդակի, եւ փորձ արվեց այդ պատկերացումները տարածել «դարաբաղի» հասկացության վրա ընդհանրապես: Այսպիսով, փաստորեն, որոշակի հաջողությամբ իրականացվեց վերը նշված առաջին կետը՝ հասարակական գիտակցության մանիպուլյացիա՝ քաղաքական լարվածություն եւ քաոս ստեղծելու նպատակով:

❖ «Չկարգավորված Ղարաբաղյան հակամարտությունը մեր բոլոր դժբախտությունների աղբյուրն է». սրանով, մասնավորապես, արմատավորվում էր առանց որեւէ նախապայմանի՝ ազատագրված տարածքների հանձնման գաղափարը:

### **ԶԶ եւ ԼՂԶ տեղեկատվական ինտեգրման խնդիրը**

Չարկ է ընդգծել, որ վերը բերված «գունավոր կարգախոսները» հասարակության մեջ որոշակի ռեզոնանս ստացան, եւ այս փաստը, մասնավորապես, ԶԶ եւ ԼՂԶ տեղեկատվական քաղաքականության

ոլորտում թույլ տրված կոպիտ սխալների հետեւանք էր: Չնայած ռազմա-քաղաքական եւ տնտեսական բնագավառներում երկու հանրապետությունների հաջող ինտեգրմանը, տեղեկատվական ինտեգրման մասին խոսելը դեռ վաղ է: «Ղարաբաղյան շարժման» տարիներին հայ հանրությունն ամենեւին էլ վատ տեղեկացված չէր (նկատի ունենալով տեղեկատվության հաղորդման հանրահավաքային եւ մասնավոր աղբյուրները) Արցախում իրավիճակի մասին: Մինչդեռ, այսօր տպավորություն է ստեղծվում, թե ԼՂՀ-ն գտնվում է «ռադիոլուռության» գոտում. միայն միջազգային դիտորդների այցելությունների ժամանակ են հեռուստաալիքները, Ստեփանակերտի նախագահական նստավայրի ֆոնին, շաբլոն ռեպորտաժներ հաղորդում: Այս կապակցությամբ նշենք, որ հիմնախնդիրն ընդհանուր է ամբողջ Հայաստանի համար. «սեփական թղթակիցների» խորհրդային համակարգը վերացավ, իսկ գլոբալացման դարաշրջանում գրեթե բոլոր տարածաշրջանները տեղեկատվական իմաստով հայտնվեցին միմյանցից մեկուսացված վիճակում:

### **Որոշ հետեւություններ**

Ասվածից հետեւում է, որ խիստ հրատապացել է ԼՂՀ ՏԱ հիմնախնդիրներով զբաղվով մասնագիտացված փորձագիտական կառույցի ստեղծումը: Այն պետք է ՀՀ մասնագետների հետ համատեղ աշխատանքներ իրականացնի հետեւյալ ուղղություններով.

1. Ինֆոգեն սպառնալիքների դասակարգում, ԼՂՀ-ի դեմ տեղեկատվական գործողություններ մշակող կենտրոնների բացահայտում եւ այդ գործողությունների չեզոքացմանն ուղղված արդյունավետ, ասիմետրիկ մեթոդների մշակում:

2. Կանխարգելիչ եւ հարձակողական տեղեկատվական գործողությունների վարման մեթոդների մշակում:

3. ՀՀ-ԼՂՀ միասնական տեղեկատվական տարածության ձեւավորմանն ուղղված ջանքերի գործադրում:

## ՇԱՐՎԱԿՈՒՄՆԵՐ ԾՊՏՅԱԼ ՀԱՅԵՐԻ ԽՆԴՐԻ ՇՈՒՐՋ Ռուբեն Մելքոնյան

Թուրքիայում բնակվող ծպտյալ եւ իսլամացված հայերի հարցը ժամանակ առ ժամանակ հայտնվում է թուրքական մամուլի, քաղաքական, գիտական շրջանակների օրակարգում եւ պատճառ դառնում տարատեսակ շահարկումների: Նույնիսկ մակերեսային դիտարկումները թույլ են տալիս ենթադրել, որ շահարկումների քաղաքականությունն աճելու եւ էլ ավելի ծայրահեղ դառնալու միտում ունի:

Ընդհանրապես, հայկական թեմատիկան նուրբ եւ զգայուն հարց է Թուրքիայում: Վերջին տարիներին դրան է ավելացել նաեւ ծպտյալ ու իսլամացված հայերի թեման, ինչը թուրքական քարոզչամեքենային կեղծիքի նոր ակիք բարձրացնելու հնարավորություն է տվել: Թուրքական մամուլը, տարբեր վերլուծաբաններ, գիտնականներ վերջին մեկ ամսվա ընթացքում կրկին անդրադարձան ծպտյալ հայերի թեմային՝ օգտագործելով արդեն ավանդական շահարկման գործիքները, որոնք, կարելի է ասել, արդեն հնացել են: Միգուցե նաեւ այդ է պատճառը, որ թուրքական քարոզչամեքենան, ձգտելով նորության, ավելի է խեղաթյուրում փաստերը եւ անհեթեթ տարբերակներ հրապարակ նետում:

Թուրքական Aktif Haber թերթի լրագրող Յուսուֆ Գեզգինը մեկն է նրանցից, ով ակտիվորեն զբաղվում է Թուրքիայի այլակրոնների եւ հատկապես ծպտյալների խնդրով: Նրա հոդվածներն աչքի են ընկնում ծայրահեղական, կողմնակալ մոտեցումներով: Յուսուֆ Գեզգինը, թեմային վերաբերող իր վերջին հոդվածում (18 ապրիլի), զարկ տալով երեւակայությանը, անդրադարձել է ծպտյալ հայերի մեջ իբրեւ թե գոյություն ունեցող երկու խմբերի՝ հոդվածը վերնագրելով «Ծպտյալ հայերը հայերի դեմ»: Ըստ նրա, Թուրքիայում 35-50 հազար հաշվվող հայկական համայնքից բացի, որոնք քրիստոնյա են եւ պաշտոնապես ճանաչված են որպես փոքրամասնություն, կան իբրեւ մուսուլման ներկայացող ծպտյալ հայեր, որոնց թիվը, ըստ տարբեր աղբյուրների, 1 միլիոն է: *«1915-ի դեպքերից հետո Անատոլիայում մնացած այս հայերի մեծ մասը՝ ամենաքիչը կեսը, թուրքերի կամ քրդերի մեջ շարունակում են ապրել որպես իսկական մուսուլմաններ: Եթե նույնիսկ գիտեն էլ իրենց նախկին ինքնության մասին, ապա, միեւնույն է, նպատակ չունեն վերադառնալ դրան: Սակայն Եվրոպայից ֆինանսավորվող որոշ կազմակերպություններ ցանկանում են այս հատվածի կրթված երիտասարդներին հիշեցնել իրենց հայկական*

արմատները: Այս մեկ միլիոնի զգալի մասը, իմանալով եւ գիտակցելով իր հայկական ինքնությունը, ներկայանում է որպես թուրք կամ քուրդ: Այս մասը մի կողմից՝ քուրդ եւ քուրդիստ ինքնությամբ PKK-ի եւ նրա քաղաքական կազմակերպության ամենաառջեւում է տեղ զբաղեցնում, մյուս կողմից՝ ազգային, նույնիսկ ազգայնական ինքնությամբ ամենառասիստ թուրքիստների շարքերում է տեղ գտնում: Սակայն ամենաազդեցիկ տեղը, որ զբաղեցնում են այս կրիպտո հայերը, քաղաքացիական եւ զինվորական բյուրակրատիան են: Քրդերի, թուրքերի, ալեւիների մեջ տեղ զբաղեցնող ծպտյալ հայերը բյուրոկրատիայի կարեւոր կետերում բավական ազդեցիկ են: Դատական, ռազմական համակարգերում եւ համալսարաններում բավական թվով ծպտյալ հայեր կան, եւ համալսարաններում գտնվողները տեղ-տեղ բացահայտվում են: Սակայն բանակի եւ դատական համակարգի մեջ եղածների անունները ոչ ոք համարձակություն չի ունենում արտասանել:»

Ըստ Յուսուֆ Գեզգինի՝ Թուրքիայի ծպտյալ հայերը բաժանվում են երկու խմբի. առաջինը նրանք են, ովքեր ցանկանում են ծպտյալ մնալով շարունակել իրբեւ թե թուրքական պետության ներսում իրենց ունեցած ազդեցությունը, եւ երկրորդը՝ նրանք, ովքեր ցանկանում են արձանագրել ծպտյալ հայերին եւ այդպիսով ստեղծել ուժեղ հայկական ներկայություն: Եվ իրբեւ թե ծպտյալ հայերի այս երկու խմբերի միջեւ լուրջ պայքար է ընթանում: «Ծպտյալ հայերի իրական ինքնությունը բացահայտելու եւ հայկական գաղութ ստեղծելու քաղաքականությունը պաշտպանվում է հայկական սփյուռքի կողմից, որը հավատում է հայկական ծագմամբ մարդկանց արմատներին վերադարձնելու անհրաժեշտությանը: Ամերիկացի, եվրոպացի հետազոտողների, զբոսաշրջիկների, լրագրողների անվան տակ ուղեւորություններ են կազմակերպվում այն վայրեր, որտեղ բնակվում են հայկական ծագմամբ քաղաքացիները, այստեղի հայկական ինքնությունն ավելի ամրապնդելու, կազմակերպելու ուղղությամբ աշխատանքներ են կատարում: Եվրամիության ֆոնդերից օգտվելով՝ Անատոլիայի հայկական հուշարձանների վերականգնման համար ջանքեր են գործադրվում: Հայկական մշակույթը վերակենդանացնելու խնդրում պետության մեջ տեղ գտած ծպտյալ հայերն էլ լուրջ աջակցություն են ցույց տալիս: Ես կարծում եմ, որ Եվրատեսիլների ժամանակ Թուրքիայից Հայաստանին տրված բարձր միավորները հայկական ներկայությունն ապացուցելուն միտված ատրակցիոն են: Իսկ մյուս խումբը կողմ չէ բացությանը եւ կարծում է, որ իր ուժը գաղտնի լինելու մեջ է: Այս խումբը հավատում է, որ ծպտյալ հայերին պետության, PKK-ի, ազգայնականների մեջ ներդնելով՝ կկարողանա ավելի հեշտ ներսից ծնկի բերել, մասնատել թուրքական հասարակությունը, պետությունը: Այս խումբն անհանգստա-

նում է, որ բաց քաղաքականությամբ կգաղտնագերծվեն այն դիրքերը, որ նրանք ձեռք են բերել երկար տարիների աշխատանքով: Նրանք կարծում են, որ ծպտյալ մնալն ավելի ազդեցիկ է ձեռնտու է, որ այն իրենց նպատակին հասնելու եւ թուրքերից վրեժ լուծելու համար ավելի հարմար մեթոդ է: Եվրամիությանը թուրքիայի անդամակցության գործընթացն սկսելու հետ մեկտեղ ծպտյալ հայերի այս երկու խմբերի միջեւ լուրջ պայքար է սկսվել»: Հողվածագիրը ավելի հեռուն է գնում եւ նույնիսկ Հրանտ Դինքի սպանությունը վերագրում ծպտյալ հայերին. «Ես այնքան էլ անհավանական չեմ համարում նաեւ այն, որ Հրանտ Դինքին, որը կողմ էր բաց լինելուն եւ խոսում էր ծպտյալ հայերի գոյության մասին, սպանել են ազգայնականների մեջ ներդրված ծպտյալ հայերը»:

Ըստ Գեզգինի, բաց քաղաքականություն վարող եւ հայկական ինքնությունը ի հայտ հանել ձգտող խումբը, ի տարբերություն մյուս խմբի, ավելի «մաքուր, անմեղ է»: Նրա կարծիքով ինքաբացահայտվող ծպտյալ հայերը անհամեմատ ավելի քիչ վնաս կարող են պատճառել թուրքիային: Հողվածագիրը ավելի է բացում քարտերը եւ վերլուծում այն հնարավոր զարգացումները, որոնց կարող է հանգեցնել ծպտյալ հայերի ինքնաբացահայտումը եւ վերադարձը արմատներին. «Անատոլիայում մի ժամանակ բնակչության մոտավորապես մեկ չորրորդը հայերն են կազմել, շատ լավ բարեկամություն, հարեւանություն են արել, եւ նույնիսկ համարվել են «հավատարիմ ազգ»: Այսօր եթե բոլորն էլ իրենց արմատներին վերադառնան, չեմ կարծում, թե թուրքիայի բնակչության հազիվ 1 տոկոսը<sup>1</sup> գերազանցող հայ բնակչությունը երկրի համար պրոբլեմ կլինի: Սակայն ծպտյալ հայերն արդեն մեկ դար է՝ ոչ հայերին, ոչ էլ թուրքերին հանգիստ չեն տալիս»:

Վերջում Գեզգինը անդրադառնում է թուրքական այն հայտնի թեզին, թե ծպտյալ հայերը ներդրված են ամենուր եւ նրանցից մեծ վտանգ է սպառնում. «Այս երկրում ծպտյալ հայերը մեր մեջ են այն աստիճան, որ կարող են լինել թուրքական ազգայնականության ղեկավար, Լոզանում հայկական թեզերին թուրքական կողմի անունից պատասխան տվող<sup>2</sup>, ազգայնական ցույցերին ամենաառջեւում թուրքական դրոշը թափահարող»:

<sup>1</sup> Հիշեցնենք, որ ըստ վերջին մարդահամարի՝ թուրքիայի բնակչությունը կազմում է 70 586 256 մարդ:

<sup>2</sup> Այստեղ Գեզգինը, ըստ երեւոյթին, նկատի ունի թուրքիայի Բանվորական կուսակցության նախագահ Դողու Փերինչեքին, որը Շվեյցարիայում դատապարտվել է Հայոց ցեղասպանությունը մերժելու համար:



Վերջերս տիրահռչակ պատմաբան Յուսուֆ Չալաչօղլուն, խոսելով Բոստոնի Չայ հեղափոխական դաշնակցության իբր թե փակ արխիվի մասին, նորից հայտարարեց, որ «1915-ի աքսորի ժամանակ մոտ 90-95 հազար հայ երեխա եւ կին ապաստան են գտել մուսուլման ընտանիքների մոտ եւ ժամանակի ընթացքում իսլամացել: Սրանք փոխում են անունները եւ իրենց գոյությունը այդպես շարունակում: Սակայն 1970-ականների կեսերին այս մարդիկ անունները փոխելով՝ կրկին սկսեցին հայկական անուններ ընդունել: Անատոլիայում բոլորը գիտեն, թե ով է հայ: Չրանտ Դինքը ասում էր, որ սրանց թիվը շուրջ 500 հազար է»:

Իսկ այս խնդրով զբաղվող մեկ այլ լրագրող՝ Մեհմեթ Շելքեթ Էյզին (Milli gazete, 26.05.08) նշում է, որ հիշյալ խնդրի շուրջ պետք է զգույշ գրել եւ խոսել: Ըստ նրա՝ ծպտյալ հայերից պետք է տարանջատել բացահայտ հայերին, որոնք Թուրքիայում ապրում են որպես փոքրամասնություն: «Ծիշտ չէ մեղադրել ծպտյալ հայերի մեծամասնությանը (լինեն 500 հազար կամ էլ 1.5 միլիոն): Նրանց մեծ մասը, իմ կարծիքով, իսկապես մուսուլման է դարձել: Սակայն փաստ է, որ այս կրիպտո-հայերի մեջ կան մարդիկ, որոնք վնաս են տալիս Թուրքիային»: Այնուհետեւ նա եւս՝ շարունակելով թուրքական բազմիցս հնչած այն կարծիքը, թե Թուրքիայում տեղի ունեցած գրեթե բոլոր բացասական երեւույթների համար մեղավոր են հայերը՝ լինեն բացահայտ թե ծպտյալ, նշում է. «1960թ. մայիսի 27-ի հեղաշրջման մեջ նրանք (ծպտյալ հայերը) մեծ դեր են ունեցել: PKK-ի շարժումն իրականում ոչ թե քրդական, այլ հայկական շարժում է: Վերջին 60 տարվա ընթացքում բոլոր ահաբեկչությունների, հեղաշրջումների, խռովությունների, հուզումների, բռնությունների մեջ դեր են ունեցել կրիպտո-հայերը: Կրկին հայկական փոքրամասնության անդամ իմ քաղաքացիներին առանձնացնելով՝ ասում եմ. այսօր իսլամի, մուսուլմանների, Ղուրանի, սրբության դեմ ամենակատաղի հարձակվողներն արտաքուստ թուրք եւ մուսուլման երեւացող կրիպտոներն են»:

Թուրքիայում հայերի թեմայի շահարկումն այն աստիճանի է հասել, որ նույնիսկ հայտնի թուրքասեր, պոլսահայ Լեւոն Փանոս Դաբադյանը վերջերս հանդես եկավ հողվածով (Once Vatan, 6.06.08): Այսպես, անդրադառնալով վերոնշյալ թուրք հեղինակներին, նա հարց է տալիս, որ եթե հայերը չլինեին, ինչո՞վ պետք է զբաղվեին ոմանք, նրանց համար ի՞նչը պետք է լիներ գրելու նյութ եւ այդպիսով նաեւ ապրուստ հոգալու միջոց: Եվ ինքն էլ պատասխանում է իր հարցին՝ ասելով, որ այդ դեպքում այդ լրագրողների համար նյութ ուղղակի չէր լինի: Նա անդրադարձել է նաեւ հայերի իսլամ ընդունելու խնդրին, նշելով, որ հայերի իսլամացումը ոչ թե 1915-ի, իր ձեւակերպմամբ՝ աքսորի ժամանակ, այլ թուրքերի եւ հայերի առաջին շփման ժամանակ է սկսվել, որը շարունակվել է նաեւ օսմանյան

շրջանում: Իսկ խոսելով ցեղասպանության ժամանակ իսլամ ընդունած հայերի մասին՝ նա մեջբերում է այդ տարիներին արձակված հրամանը, որով թուրք ոստիկանները շրջում էին մուսուլմանների տները եւ պահանջում հանձնել իրենց մոտ ապաստան գտած հայերին: Այդ հրամանում հետագայում ավելացվել է, որ եթե հայերը նույնիսկ իսլամ էլ են ընդունել, ապա, միեւնույն է, պետք է հանձնել նրանց: *«Եվ այսքանից հետո փրկվածներին այսօր PKK-ական համարելը, պիտակ կպցնելը որքանո՞վ է պատվաբեր»:*

Այս բոլոր շահարկումները, մեր կարծիքով, տեղավորվում են ավելի լայն հասկացողության մեջ. հանրապետական Թուրքիայում հայերը միշտ էլ ներկայացվել են որպես դավաճան, «5-րդ շարասյուն», եւ այս ամենը կատարվել է պետական ամենաբարձր մակարդակով: Այս նույն համատեքստում կարելի է տեղավորել Թուրքիայում թշնամի ունենալու անհրաժեշտությունը, իսկ թշնամու ամենահարմար «թեկանածուն» հայերն են: Անդրադառնալով այս խնդրին թուրք հայտնի լրագրող Էջե Թեմեւբուրանը հարց է տալիս, թե ի՞նչ են անելու թուրքերը, երբ բոլոր հայերը լքեն երկիրը, այդ դեպքում ո՞ւմ են հռչակելու թշնամի: Նրա կարծիքով այդ ժամանակ թուրքերը սկսելու են միմյանց մեղադրել ավելի քիչ թուրք լինելու մեջ եւ իրար հայտարարել թշնամի:

## **ԱԴՐԲԵՋԱՆ. ԷՆԵՐԳԵՏԻԿ ՆՈՐ ՎԵՐԵԼՔԻ ՀԵՌԱՆԿԱՐԸ** **Սարգիս Հարությունյան**

Սույն թվականի մայիսի 19-20-ը Բաքվում էր Թուրքմենստանի նախագահ Գուրբանգուլի Բերդիմուհամեդովը: Թեև նախագահ Ալիևի հետ կայացած բանակցությունների արդյունքում կողմերը որեւէ կոնկրետ պայմանավորվածության վերաբերյալ հայտարարությամբ հանդես չեկան, բայց հաշվի առնելով երկու երկրների միջև դեռևս առկա լուրջ հակասությունները<sup>1</sup>, Բերդիմուհամեդովի այցը ցուցիչ է, որ`

❖ Բաքվի ու Աշխաբադի հարաբերություններում «ճեղքում» է գրանցվել. ողջ հարցը, սակայն, այն է, որ նմանատիպ «ճեղքում» կարող էր գրանցվել միայն ավելի էական պայմանավորվածության հետևանքով, որը կարող է գոնե առժամանակ մի կողմ դնել ադրբեջանա-թուրքմենական հայտնի հակասությունները,

❖ երկրորդ կարեւոր հետեւությունը պետք է այն լինի, որ դժվար թե այդ պայմանավորվածությունն առնչվում է սոսկ երկու երկրներին. ո՛չ Ադրբեջանը եւ ո՛չ էլ Թուրքմենստանը չունեն այն քաղաքական ու տնտեսական հնարավորությունները, որ հանդես գան միմյանց համար այդչափ գրավիչ առաջարկով:

Առաջիկա ամիսներին ենթադրվող էներգետիկ, տնտեսական ու ի վերջո՝ աշխարհաքաղաքական զարգացումները ոչ միայն կարող են լրջորեն փոխել իրավիճակը Հարավային Կովկաս-Կասպից-Կենտրոնական Ասիա գծում, այլև որոշակիացնել այն հարցի պատասխանը, թե ով կարող է կանգնած լինել ադրբեջանա-թուրքմենական «ճեղքման» ետևում:

Ինչ վերաբերում է Հայաստանին, ապա մեր երկրի համար այս դեպքում, թերևս, ոչ այնքան կարեւոր են ախարհաքաղաքական զարգացումները, որքան այն հանգամանքը, որ Ադրբեջանը կարծես թե մուտք է գործում էներգետիկ վերելքի մի շրջան, ուր թուրքմենա-ադրբեջանական ուղղությամբ ենթադրվող զարգացումները սպասվող նորությունների միայն մի մասն են: Այլ կերպ ասած, օրինակ, այսօր Հայաստանի համար արդիական ադրբեջանական ռազմական ծախսերի մեծացման հարցը կարող է էլ ավելի սուր ծելով հանդես գալ:

### **Իրավիճակային վերլուծություն**

Չնայած վերջին շրջանում Ադրբեջանին առնչվող էներգետիկ զարգացումները կենտրոնացած չեն միայն ադրբեջանա-թուրքմենական ուղղությամբ, սակայն հենց այդ ուղղությունն է, որ առաջիկայում Բաքվի համար, նավթի վաճառքից հետո, կարող է դառնալ եկամտի երկրորդ կարելուրդ աղբյուրը՝ միաժամանակ էլ ավելի մեծացնելով Ադրբեջանի կարելուրդը տարածաշրջանային աշխարհաքաղաքական գործընթացներում:

Լուրջ հիմքեր են առաջանում ենթադրելու, որ Խորհրդային Միության փլուզումից ի վեր անհեռանկարային, անզամ՝ անիրատեսական համարվող «Անդրկասպյան գազամուղը» («Transcasian pipeline»), որը Թուրքմենստանից միանալով Ադրբեջանին պետք է առաջին հերթին թուրքմենական բնական գազը հասցնի Եվրոպա, ի վերջո կարող է իրականություն դառնալ: Եթե 2007թ. սեպտեմբերին ու նոյեմբերին տեղի ունեցած Բերդիմուհամեդովի այցերը Նյու Յորք ու Բրյուսել բնութագրվեցին որպես սովորական՝ ընդամենը դիվանագիտական նվազագույն օրակարգ ունեցող հանդիպումներ (ի տարբերություն ռուսական ու չինական ուղղությունների<sup>2</sup>), ապա լիովին այլ կարգի նորություն էր պաշտոնական Աշխաբադի որոշումը՝ հանձնարարել բրիտանական «Gaffney, Cline & Associates Ltd.» ընկերությանը իրականացնել Թուրքմենստանի բնական գազի հանքերի առաջին անկախ աուդիտը՝ պարզելու թուրքմենական կապույտ վառելիքի իրական ծավալները: Նշենք, որ նման աուդիտ չի անցկացվել Թուրքմենստանի անկախությունից ի վեր, իսկ միջազգային պրակտիկայում գազահանքերի աուդիտը սովորաբար նախորդում է պայմանագրերի կնքմանը:

Նման ենթադրությունը հաստատվեց արդեն հաջորդ ամիս, երբ 2008թ. ապրիլի 9-10-ը Աշխաբադում էր Եվրամիության արտաքին հարաբերությունների հանձնակատար Բենիտա Ֆերերո-Վալդների գլխավորած պատվիրակությունը: Ամերիկյան աղբյուրները նշում են, որ Թուրքմենստանի մայրաքաղաքում կայացած հենց այդ բանակցությունների ժամանակ էլ Գուրբանգուլի Բերդիմուհամեդովը խոստացել է Եվրոպացիներին 2009թ.-ից տարեկան ԵՄ արտահանել 10 մլրդ մ<sup>3</sup> բնական գազ՝ շրջանցելով Ռուսաստանը: Փաստն այն է, որ արդեն ս.թ. մայիսի 26-ին Եվրամիության մեկ այլ հանձնակատար՝ էներգետիկայի գծով պատասխանատու Անդրիս Պիեբալզսը Աշխաբադում փոխըմբռնման հուշագիր ստորագրեց՝ էներգետիկ համագործակցության վերաբերյալ:

Ներկայացվածի ֆոնին էր, որ մայիսի 19-20-ը տեղի ունեցավ Թուրքմենստանի նախագահի այցը Բաքու: Հաշվի առնելով Ադրբեջան Բերդիմուհամեդովի այցելության փաստը եւ դրան նախորդած ադրբեջանա-թուրքմենական հարաբերությունների բարելավման մասին վկայող եւս երկու իրադարձությունները<sup>3</sup>, կարելի է, անշուշտ, բավականին հիմնավորված խոսել Ադրբեջանի ու Թուրքմենստանի հարաբերություններում տեղի ունեցած լուրջ առաջընթացի մասին, սակայն այս պարագայում կարելորն այն է, որ այդ փոփոխությունը առաջին հերթին վկայում է «Անդրկասպյան գազամուղի» կառուցման հավանականության աննախադեպ մեծացման մասին<sup>4</sup>:

Ադրբեջանի գազային ոլորտում տեղի ունեցած մյուս կարեւոր նորությունը վերաբերում է Կասպիցում գտնվող «Շահ Դենիզ» հանքավայրի շահագործման երկրորդ փուլի մեկնարկի հետ: Արեւմտյան աղբյուրների գնահատմամբ, այսօր «Շահ Դենիզի» բնական գազի պաշարները կազմում են մոտ 1.2 տրլն մ<sup>3</sup> եւ այն համարվում է աշխարհում խոշորագույն գազահանքերից մեկը:

Դեռեւս 2007թ. հոկտեմբերի 2-ին Ադրբեջանի արդյունաբերության եւ էներգետիկայի նախարար Նաթիք Ալիեւը հայտարարեց, թե իր երկիրը պատրաստ է տարեկան 12 մլրդ մ<sup>3</sup> բնական գազ արտահանել Եվրոպա՝ «Nabucco» գազամուղի միջոցով: Սակայն Ադրբեջանի գազային արտահանման հնարավորությունների գրեթե երկու անգամ աճի մասին նորությունն իր վրա նման ուշադրություն չէր հրավիրի, եթե արդեն այս տարի հայտնի չդառնար, որ Ռուսաստանն ու Իրանը բանակցությունների մեջ են՝ ադրբեջանական բնական գազը գնելու նպատակով: Այս տարվա մայիսի վերջին Բաքվում էր Իրանի նավթի փոխնախարար ու իրանական «National Iranian Gas Co» ընկերության նախագահ Ռեզա Քասանգադեն, ով այդ նպատակով մի շարք հանդիպումներ ունեցավ իր ադրբեջանցի գործընկերների հետ: Իսկ արդեն հունիսի 2-ին Բաքվում «Газпром»-ի վարչության նախագահ Ալեքսեյ Միլլերի ու նախագահ Իլհամ Ալիեւի միջեւ կայացած բանակցությունների արդյունքում հայտնի դարձավ, որ Ադրբեջանին նույն առաջարկությամբ է դիմել նաեւ ռուսական կողմը, ընդ որում հազար մ<sup>3</sup> ադրբեջանական գազի դիմաց առաջարկելով Եվրոպական գին՝ \$360:

Եթե Իրանը խնդիր ունի գազով ապահովել իր հյուսիսյաին մարզերը<sup>5</sup>, իսկ ռուսների պարագայում էլ նպատակ կա ամեն կերպ կանխել Ռուսաստանը շրջանցող գազային հոսքերի մուտքը Եվրոպա (դրա համար էլ «Газпром»-ը Բաքվին առաջարկել է նման բարձր գին), ապա մեր պարագայում գլխավոր հետեւությունը պետք է այն լինի, որ 2011թ.-ից ի

վեր, երբ պետք է սկսվի «Շահ Դենիզ» հանքավայրի շահագործման երկրորդ փուլը, Ադրբեջանը կունենա եկամտի նոր, լուրջ աղբյուր<sup>6</sup>:

Եվ վերջապես, Ադրբեջանի գազային ոլորտին առնչվող երրորդ ուշագրավ նորությունը Իրանի պատրաստակամությունն է միանալ այսպես կոչված «White Stream» («Սպիտակ հոսք») գազամուղին, որը ենթադրաբար պետք է հանդիսանա «Անդրկասպյան գազամուղի» շարունակությունը եւ պետք է Ադրբեջանը Վրաստանի ու Սեւ ծովի հատակով միացնի Ուկրաինային: 2008թ. փետրվարի 9-ին Բաքվում հրավիրված մամլո ասուլիսի ժամանակ Ադրբեջանում Իրանի դեսպան Նասիր Գամիդի Ջարեն հայտարարեց, թե իր երկիրը քննարկում է նշված գազամուղի շինարարությանը միանալու հարցը:

### **Չետևություններ**

Թեեւ տարիներ առաջ Ադրբեջանի բնական գազի պաշարները գնահատվում էին ոչ այդքան էական (օրինակ, նույն «Շահ Դենիզի» ծավալների մասին խոսելիս նշվում էր մոտ 100 մլրդ մ<sup>3</sup> թիվը) եւ այդ երկիրն անգամ ստիպված էր իր կարիքների համար գազ ներմուծել Ռուսաստանից (ինչը դադարեցվեց միայն 2007թ.), սակայն արդեն այսօր իսկ առկա իրողությունները թույլ են տալիս ենթադրել, որ առաջիկայում Ադրբեջանը կարող է դառնալ գազի միջազգային շուկայի առնվազն միջին կարգի դերակատար: Գլխավոր ինտրիգը, սակայն, առնչվում է ադրբեջանա-թուրքմենական զարգացումներին, քանի որ հենց «Անդրկասպյան գազամուղի» հեռանկարից է կախված ողջ ադրբեջանական գազային ծրագրերի ապագան, եւ առանց թուրքմենական գազի՝ ներդրումներն Ադրբեջանի գազային ոլորտում դժվար թե կրեն ռազմավարական բնույթ:

---

<sup>1</sup> Հիշեցնենք, որ երկու պետությունները չլուծված հակասություններ ունեն՝ կապված Կասպից ծովի բաժանման ու Կասպիցում գտնվող «Սարդար» (Բաքուն այն կոչում է «Քյափազ») նավթահանքի պատկանելիության վերաբերյալ, ուր առկա նավթի պաշարները գնահատվում են մոտ 100 միլիոն տոննա:

<sup>2</sup> 2007թ. մայիսի 12-ին Թուրքմենստանի Թուրքմենբաշի նավահանգստային քաղաքում կնքված ռուս-դազախա-թուրքմենական համատեղ պայմանագրի համաձայն, կառուցվելու է Թուրքմենստանը Ղազախստանի տարածքով Ռուսաստանին կապող նոր գազամուղ՝ «Մերձկասպյան գազամուղը»: Բացի այդ, 2007թ. նոյեմբերի 22-ին Բերդիմուհամեդովը հայտարարեց, թե արդիակա-

նացվելու է Թուրքմենստանը Ռուսաստանին կապող գործող գազամուղը, որպեսզի նրա թողունակության ծավալը հասնի տարեկան 83 մլրդ մ<sup>3</sup>՝ գրեթե երկու անգամ ավել ներկա հնարավորությունից: Ինչ վերաբերում է թուրքմենա-չինական գազային համագործակցությանը, ապա ներկայում ընթացքի մեջ է Ուզբեկստանի ու Ղազախստանի տարածքով Թուրքմենստանը Չինաստանին միացնող գազամուղի շինարարությունը, որը պետք է ավարտվի 2009թ.-ին եւ որը տարեկան Չինաստան պետք է հասցնի 30 մլրդ մ<sup>3</sup> թուրքմենական բնական գազ:

<sup>3</sup> 2008թ. մարտի 21-ին հայտնի դարձավ, որ Թուրքմենստանի նախագահը նշանակել է Ադրբեջանում Աշխաբադի նոր դեսպանին, ով արդեն ապրիլի 8-ին իր հավտարմագրերը հանձնեց Իլհամ Ալիևին: Թուրքմենստանը Բաքվում դեսպան չունեի 2001թ.-ից ի վեր: Իսկ մայիսի 19-ին էլ հայտարարվեց, թե Ադրբեջանն ի վերջո մարել է դեռևս 1992թ.-ից Թուրքմենստանին ունեցած իր շուրջ \$45 մլն-ոց պարտքը, ինչը չէր անում նախորդ 16 տարիների ընթացքում:

<sup>4</sup> Հիեցնենք, որ միջազգային տարբեր գնահատականների համաձայն, Թուրքմենստանի բնական գազի պաշարները կազմում են 2.5-ից 7 տրլն մ<sup>3</sup>, եւ իր այդ ցուցանիշով Թուրքմենստանն աշխարհում գրավում է չորրորդ տեղը՝ Ռուսաստանից, Իրանից ու Քաթարից հետո:

<sup>5</sup> Այս տարվա հունվարի 1-ից Թուրքմենստանը դադարեցրեց գազի վաճառքը Իրանին՝ պահանջելով, որ այն հազար մ<sup>3</sup>-ի դիմաց վճարի \$150՝ ինչպես Ռուսաստանը պետք է վճարի նույն ծավալի թուրքմենական գազի դիմաց այս հուլիսի 1-ից, այլ ոչ թե նախկինի նման շարունակի վճարել \$100: Ամեն տարի Իրանը Թուրքմենստանից ներմուծում էր 8 մլրդ մ<sup>3</sup> բնական գազ՝ գլխավորապես իր հյուսիսային մարզերի համար:

<sup>6</sup> 2008թ. փետրվարի 11-ին Ադրբեջանի արդյունաբերության եւ էներգետիկայի նախարար Նաթիք Ալիևը հայտարարեց, թե Թուրքիային ու Եվրոպային վաճառվող ադրբեջանական բնական գազի հազար մ<sup>3</sup>-ի գինը առաջիկայում Բաքուն \$120-ից հասցնելու է \$300-ի:

## **ԻՍԼԱՄԱԿԱՆ ԳՈՐԾՆԹԱՑՆԵՐ ԱԴՐԲԵՋԱՆՈՒՄ** **Արաքս Փաշայան**

Կրոնական գործընթացները հետխորհրդային իսլամադավան աշխարհիկ հանրապետություններում, այդ թվում Ադրբեջանում, ունեն որոշակի առանձնահատկություններ: Դրանք էականորեն տարբեր են իսլամի ավանդական տարածման այլ շրջաններում ծավալվող համանման գործընթացներից, որտեղ իսլամի ինստիտուցիոնալիզմն ունի խորը պատմական արմատներ:

Խորհրդային շրջանում, զրկված լինելով հասարակական-քաղաքական դերակատարությունից, իսլամն Ադրբեջանում սահմանափակված էր կենցաղային-ավանդական գործառույթներով: Անկախության ձեռք բերումից հետո այն վերաթելորվեց՝ որպես ադրբեջանական ինքնության մի բաղադրիչ: Բացվեցին կամ վերաբացվեցին բազմաթիվ մզկիթներ եւ կրոնական դպրոցներ՝ մեդրեսեներ, ձեւավորվեց արտերկրի հայտնի իսլամական կենտրոններում ուսանածների մի շերտ: Վերականգնվեցին իսլամական տոները, իսլամի քարոզումը բարձրացվեց պետական մակարդակի: Պետության կողմից իսլամը դիտարկվեց որպես կարելու-րագույն արժեք, ընդգծվեց ադրբեջանական իսլամի յուրահատուկ ազգային բնույթը: Պետության եւ կրոնի հարաբերությունները կարգավորվեցին որոշակի օրենքներով, իսկ սահմանադրության մեջ ամրագրվեց հավատքի ազատության մասին դրույթը: 1994թ. նախագահ Յեյդար Ալիևի այցելությունը Մեքքա երկրում մեծացրեց կրոնի նշանակությունը:

Այս իրողությունները սակայն չնպաստեցին իսլամի ինստիտուցիոնալիզացմանը, հասարակական կյանքում նրա դերի հստակեցմանը: Չնայած Ադրբեջանում գործում են հոգեւոր կյանքը կանոնակարգող թե՛ կրոնական /Կովկասի մահմեդականների վարչություն/, թե՛ պետական /Կրոնական կազմակերպությունների հետ աշխատանքի պետական կոմիտե/ կառույցներ, սակայն հասարակության առանձին շրջանակներ չեն վստահում ավանդական կրոնական հաստատություններին եւ աստիճանաբար ներգրավվում են ոչ ավանդական կրոնական ուղղություններում: Տարածում է գտնում նաեւ կրոնական արմատականությունը, ինչը իսլամի քաղաքականացման հնարավորություն է ստեղծում: Մարդու իրավունքների եւ տարաբնույթ այլ միջազգային կառույցների՝ Ադրբեջանին վերաբերող զեկույցներում իշխանություններին խորհուրդ է տրվում



իսլամի եւ իսլամական ինստիտուտների վերաբերյալ հասարակական դիսկուրսներ կազմակերպել՝ դրանցում ներգրավելով անկախ եւ պաշտոնական հոգեւորականների, ՀԿ-երի ներկայացուցիչների, մտավորականների:

Ի տարբերություն քրիստոնեական եկեղեցու, որը կենտրոնացված ձեւով փորձում է կարգավորել կրոնական խնդիրները, իսլամում նման կառույց չկա: Ադրբեջանում կրոնական խմբերի հիմնական մասը համագործակցում է կառավարության հետ եւ ճանաչում պետության կողմից հովանավորվող Կովկասի մահմեդականների վարչության հոգեւոր իշխանությունը: Սակայն կան առանձին կրոնական խմբեր, որոնք չեն ենթարկվում վարչությանը, որը հասարակության մեջ այդքան էլ հեղինակություն չի վայելում: Առանձին դեպքերում ավելի ազդեցիկ են անկախ իմամները, որոնք ներկայացնում են Ադրբեջանի համար իսլամի թե՛ ավանդական, թե՛ ոչ ավանդական ուղղությունները: Նրանցից են Աբու Բաքր մզկիթի իմամ Համեթ Սուլեյմանովը եւ Ջումա մզկիթի նախկին իմամ, իրավապաշտպան Իլդար Իբրահիմովը: Նրանց հետ կրոնական էլիտան չի փորձում երկխոսել՝ ցավոտ ընկալելով երկրում կրոնական այլախոհության փաստը:

Չնայած Ադրբեջանը հիմնականում շիադավան պետություն է, սակայն կրոնական ինստիտուցիոնալիզմի տեսանկյունից նման չէ ամենամեծ շիական պետությանը՝ Իրանին: Այստեղ չկա շիա հոգեւոր հիերարխիա, չկա *մարջա՝ աթ-թակլիդ*՝ կրոնական սկզբնաղբյուր, որին հավատացյալը պետք է հետեւի: Ադրբեջանի շեյխ ուլ-իսլամը սուրբ օրենքների եւ իսլամի դոգմաների բացարձակ մեկնող չի համարվում:

2006թ. անցկացված հարցախույզի տվյալներով՝ խորքային հավատացյալ է բնակչության 7,2 տոկոսը, 49.7 տոկոսը հավատում է Աստծուն, սակայն գործնականում չի իրականացնում իսլամի սկզբունքները: Մահմեդական բնակչության 2/3 շիա է, 1/3-ը՝ սուննի:

Իր հերթին, հասարակական-քաղաքական կյանքում իսլամի ազդեցության ընդլայնումից խիստ զգուշանում է պետությունը, որը ձգտում է զսպել կրոնականացումը եւ պահպանել երկրի աշխարհիկ բնույթը: Ադրբեջանի իշխանությունները պարբերաբար ճնշումներ եւ բռնություններ են իրականացրել կրոնա-քաղաքական կուսակցությունների, իսլամամետ գործիչների, Ադրբեջանում հաստատված իսլամական ոչ ավանդական ուղղությունների եւ կրոնական ակտիվիստների նկատմամբ: Այս իրողություններն էապես խոչընդոտում են երկրում իսլամական դիսկուրսի ազատ ծավալմանը, հասարական-քաղաքական կյանքում իսլամի դերի հստակեցմանը:

2006թ. սկզբից իսլամական գործոնը սկսեց ավելի կարելու դեր խաղալ Ադրբեջանի հասարակական-քաղաքական կյանքում, ինչը պայմանավորված էր թե՛ արտաքին, թե՛ ներքին գործոններով: 2005թ. խորհրդարանական ընտրությունների արդյունքների հերթական կեղծումը մեծ հիասթափություն առաջացրեց արեւմտյան արժեքների եւ ընդհանրապես Արեւմուտքի նկատմամբ: Աստիճանաբար քաղաքական դաշտում ի հայտ եկան զարգացման իսլամական ուղու կողմնակիցներ:

Ադրբեջանական հասարակությունը սկսեց ավելի զգայուն դառնալ նաեւ աշխարհաքաղաքական գործընթացներում իսլամին առնչվող իրողությունների նկատմամբ, ինչն ի հայտ բերեց հակաամերիկյան տրամադրություններ: 2005թ. սկիզբ առած Մուհամեդ մարգարեի ծաղրանկարների պատերազմին արձագանքեցին նաեւ Ադրբեջանում: Փետրվարի սկզբին Բաքվում, ապա Բաքվից ոչ հեռու գտնվող եւ կրոնականացված շրջան համարվող Նարդարանում տեղի ունեցան բողոքի ակցիաներ: Հրկիզվեցին ԱՄՆ-ի, Իսրայելի, Դանիայի, նաեւ՝ Հայաստանի եւ Շվեյցարիայի դրոշները: Փետրվարի 11-ին Ադրբեջանում ոչ շատ հայտնի «Յենի խաբար» թերթը հրատարակեց Հիսուս Քրիստոսի եւ Մարիամ Աստվածածնի ծաղրանկարները: Ապրիլին հրեական կազմակերպությունները սպառնալիքներ ստացան մինչ այդ անհայտ «Մուսուլման եղբայրներից»: 2006թ. ամռանը իսրայելա-լիբանանյան պատերազմի ժամանակ Բաքվում եւ մի քանի այլ բնակավայրերում տեղի ունեցան ոչ ստվարաթիվ հակաիսրայելական միտինգներ, ինչն աննախադեպ էր:

2006թ. գարնանը Բաքվում եւ Սումգայիթում 600 երիտասարդների շրջանում Կրոնական հետազոտությունների կենտրոնի անցկացրած հարցախույզի մասնակիցների 9 տոկոսը կողմ է արտահայտվել Ադրբեջանում իսլամական պետության ստեղծմանը:

Հետաքրքրական է նաեւ 2006թ. ապրիլ-մայիս ամիսներին Տնտեսական եւ քաղաքական հետազոտությունների կենտրոնի՝ ողջ երկրի տարածքում 1000 հարցվածների շրջանում անցկացված հարցախույզը: Իսլամական պետության գաղափարին այս դեպքում կողմ է եղել հարցվածների 19 տոկոսը, 30 տոկոսը կողմ են եղել մասնակիորեն: Այլ կերպ ասած, մոտ 50 տոկոսն իսլամական բարոյական արժեքների կողմնակից է: Հարցվածների 40 տոկոսը միջազգային հարաբերություններում պատրաստ են աջակցել ցանկացած իսլամական պետության, եթե վերջինս խնդիր ունի որեւէ ոչ իսլամական երկրի հետ:

Վերջին տարիներին Ադրբեջանում որոշակիորեն ավելացել են նաեւ իսլամական գլխաշոր կրողները, որոնք բախվում են բազմաթիվ

սոցիալական խնդիրների հետ: 1999թ. օրենքի ուժ ստացավ պաշտոնական փաստաթղթի համար գլխաշորով նկարվելու արգելքը: 2007թ. ադրբեջանական խորհրդարանը պատրաստվում էր քննարկել «Կրթության մասին» օրենքի նախագիծը, որն արգելում էր կրթական հաստատություններում գլխաշոր կրել: Սակայն խնդիրը հասարակական մեծ հնչեղություն ստացավ եւ դուրս բերվեց օրենսդրական դաշտից:

Ադրբեջանում այսօր կան կրոնականացված շրջանակներ, որոնք առաջ են քաշում իսլամը պետական կրոն հռչակելու, իսլամական օրենքներն իրավական դաշտ մտցնելու, իսլամի ազդեցությունը հասարակական կյանքում ընդլայնելու գաղափարներ: Ադրբեջանում օրինակ հարց է բարձրացվել բազմակնության եւ ժամանակավոր ամուսնության մասին օրենք մտցնելու մասին: Պահանջվել է, որպեսզի չարգելվի կնոջը պաշտոնական փաստաթղթի համար լուսանկարվել գլխաշորով:

Որոշակի կրոնականացվածություն նկատվում է երիտասարդության եւ մտավորականության առանձին շերտերում, այդ թվում՝ Բաքվում: Բնականաբար, իսլամական քարոզչությունն առավել արդյունավետ է սոցիալապես անապահով շրջաններում, որոնք պետության անգործության ֆոնի վրա իսլամի մեջ նեցուկ են տեսնում: Այս առումով, իսլամը զգալի ներուժ ունի՝ դառնալու գաղափարախոսական հենք սոցիալական շարժումների համար:

Ադրբեջանցի առանձին ուսումնասիրողների կարծիքով՝ կրոնական ուղրտում առկա խնդիրները խոչընդոտում են ժողովրդավարության եւ քաղաքացիական հասարակության ծեւավորմանը, վտանգ են ներկայացնում աշխարհիկ պետության գոյությանը, ինչը հաղթահարելու համար անհրաժեշտ է մշակել համապատասխան հայեցակարգ: Արաբագետ Նարիման Ղասիմօղլու կարծիքով՝ նմանօրինակ խնդիրներն առաջանում են, քանի որ պետությունը չի սահմանել իսլամի տեղն ու դերը քաղաքացիական հասարակության մեջ, ինչը ռազմավարական նշանակություն ունի: Նշվում է, որ իշխանությունները չեն կարող միայն վարչական-իրավական մեխանիզմներով լուծել կրոնական խնդիրները:

Իսլամի եւ դեմոկրատիայի ինստիտուտը, որի տնօրենը Ղասիմօղլուն է, մշակել է «Ադրբեջանական հասարակության մեջ իսլամի տեղի ու դերի սահմանման հայեցակարգը», որի կենտրոնական տարրը պետության կրոնական-լուսավորչական գործունեությունն է: Պետությունը, չնայած իր աշխարհիկ բնույթին, պետք է ուղղորդի այն: Իսլամը պետք է լինի ոչ թե առանձին անհատների, կրոնական գործիչների կամ համայնքների, այլ՝ ժողովրդի մենաշնորհը: Ղարոցներում, կրթական հաստատություններում

պետք է մտցվեն Ղուրանի դասեր, իսլամական սկզբունքները, տարակարծություն չառաջացնելու համար, պետք է մեկնաբանվեն միայն Ղուրանի եւ ոչ թե իսլամական այլ սկզբնաղբյուրների տեսանկյունից: Կրոնական ծեսերը, ծիսակարգերը, քարոզները պետք է իրականացվեն միայն ադրբեջաներենով, որպեսզի իսլամը մատչելի լինի: Հիշյալ ուղին կարող է համախմբել հասարակությանը միասնական կրոնական-էթիկական արժեքների շուրջ, հաղթահարել կրոնական երկփեղկվածությունն ու արմատականությունը՝ միեւնույն ժամանակ խուսափելով աշխարհիկության դեմ ուղղված վտանգներից:

Հարկ է նշել, որ կրոնականացման աճին ըստ էության նպաստում են ադրբեջանական հասարակության մեջ առկա բեւեռացումը, բարոյական արժեքների անկումը, ժողովրդավարության պակասը, որոնք հանգեցնում են հիասթափության աշխարհիկ արժեքների եւ ավանդական կրոնական ինստիտուտների նկատմամբ:

Սակայն ներկայումս հասարակական պահանջը աշխարհիկության պահպանումն է: Այդ են վկայում նաեւ պարբերաբար անցկացվող հարցախույզերը: Ադրբեջանում ավանդական եւ ոչ ավանդական կրոնական ուղղությունները չեն կարող առաջիկայում քաղաքական նշանակություն ձեռք բերել: Մի քանի խմբեր, որոնք հրապարակավ խոսում են իսլամական պետության ստեղծման մասին, իրենց ծրագրերն իրականացնելու համար համապատասխան ռազմավարական հայեցակարգերի եւ գործադրման մեխանիզմների չեն տիրապետում: Իրենց հերթին, իշխանությունները չափազանցնում են քաղաքական իսլամից եկող սպառնալիքները՝ հիմնավորելու բռնությունները եւ վերահսկելու կրոնական դաշտը:

## **ԻՐԱՆ. ՔԱՂԱՔԱԿԱՆ ՉԱՐԳԱՑՈՒՄՆԵՐ Սեւակ Սարուխանյան**

*Մայիսի 28-ին Իրանի նորընտիր խորհրդարանն ընտրեց իր նոր խոսնակին: Քվեարկության արդյունքում մեջլիսի առաջնորդ դարձավ Իրանի Յանրային հեռուստաընկերության եւ ռադիոյի նախկին նախագահ, Իրանի Ազգային անվտանգության բարձրագույն խորհրդի նախկին քարտուղար Ալի Լարիջանին: Լարիջանիի հաղթանակը կարելուր ազդեցություն կարող է ունենալ թե՛ մեջլիսի գործունեության, թե՛ եկող տարի սպասվող նախագահական ընտրությունների ընթացքի վրա:*

### **Իրանի նոր խորհրդարանը եւ գալիք նախագահական ընտրությունները**

Թեեւ Ա.Լարիջանին աջ պահպանողականների քաղաքական թեւի ներկայացուցիչ է եւ մեջլիսի խոսնակի ընտրություններին վայելում էր նախագահ Մ.Ահմադինեժադի աջակցությունը, սակայն իր մի շարք մոտեցումներով նա տարբերվում է վերջինիս քաղաքական թիմի ներկայացուցիչներից:

*Առաջին.* Ալի Լարիջանին, աշխարհիկ քաղաքական գործիչ լինելով, անմիջականորեն կապված է Իրանի հոգեւոր իշխանությունների հետ: Բացի նրանից, որ ծնվել է հոգեւորականի ընտանիքում, նա նաեւ իսլամական հեղափոխության խոշոր գաղափարախոս Մ.Մոտախարիի փեսան է: Սա կարելուր հանգամանք է, քանի որ ժամանակակից Իրանի քաղաքական դաշտը գնալով կտրվում է հոգեւոր իշխանությունների հետ կապից, ինչի դրսևորումներից էին թե՛ աշխարհիկ Մ.Ահմադինեժադի ընտրությունը երկրի նախագահի պաշտոնին, թե՛ Իրանի վերջին մեջլիսի կազմը, որում հոգեւորականների թիվը հազիվ հասնում է 10 տոկոսի: Այսպիսով, ի տարբերություն Իրանի ներկայիս քաղաքական դաշտի մեծամասնության, աշխարհիկ Ա.Լարիջանին հենց հոգեւորականների թեւի ներկայացուցիչ է, այլ ոչ միայն այդ թեւի գաղափարական հետեւորդ:

*Երկրորդ.* Ա.Լարիջանին, ունենալով բավական պահպանողական քաղաքական գաղափարներ, ավելի քան ընդունելի է միջազգային հանրության կողմից: Սրա վկայությունն է արեւմտյան մամուլի հաղորդագրություններում եւ վերլուծություններում առկա դրական ենթատեքստը՝ կապված Ա.Լարիջանիի մեջլիսի նախագահ ընտրվելու հետ: Միջուկային

հիմնախնդրով արտերկրի հետ բանակցողների թիմի ղեկավարը լինելով՝ Ա.Լարիջանին աչքի է ընկել համեմատաբար մեղմ դիրքորոշմամբ եւ բազմիցս քայլեր է իրականացրել միջուկային հիմնախնդրի խաղաղ կարգավորման ուղղությամբ:

*Երրորդ.* Ա.Լարիջանին Ազգային անվտանգության քարտուղարի պաշտոնից հեռացվել է նախագահ Մ.Ահմադինեժադի կողմից, եւ դրա հիմնական պատճառներից են եղել, ինչպես հաղորդում էին մի շարք միջազգային աղբյուրներ, նախագահի եւ Ազգային անվտանգության խորհրդի քարտուղարի միջեւ եղած հակասությունները եւ բարդ անձնական հարաբերությունները: Այս առումով, Ա.Լարիջանի ընտրությանը Մ.Ահմադինեժադի հավանությունը պետք է համարել ավելի շատ որպես քարոզչական քայլ, քանի որ խորհրդարանում մեծամասնություն կազմող պահպանողականների ընդամենը մի փոքր հատվածն է համարվում նախագահի աջակից, եւ նրանց դիրքորոշումը չէր կարող ազդել պահպանողականների ընդհանուր զանգվածի՝ Ա.Լարիջանին մեջլիսի նախագահ ընտրելու որոշման վրա:

Այս ամենը խոսում է այն մասին, որ Իրանի խորհրդարանի ղեկին է հայտնվել բավական ազդեցիկ քաղաքական գործիչ, որի գործունեությունը կարող է լրջորեն բարձրացնել խորհրդարանի դերը երկրի քաղաքական կյանքում: Իրանի պետական համակարգի բավական կարելուր հատկանիշներից է հենց այն, որ խորհրդարանի ղեկավարի անձից է մեծ մասամբ կախված խորհրդարանի դերը: Հիշենք 1980-1989 թվականները, երբ խորհրդարանն առաջնորդում էր Ա.Ա.Յաշեմի-Ռաֆսանջանին, որն Իրանի պետական համակարգի կարելուրագույն գործող անձանցից մեկն էր եւ անմիջականորեն ազդում էր ոչ միայն երկրի ներքին, այլ նաեւ արտաքին քաղաքականության վրա:

2009-ին Իրանում կայանալիք նախագահական ընտրությունների ընթացքը զգալի չափով կախված է լինելու խորհրդարանից, նրա անդամների եւ նախագահի դիրքորոշումներից: Շատ մեծ է հավանականությունը, որ Ա.Լարիջանին նախագահական ընտրությունների ժամանակ կարող է դառնալ պահպանողականների մի զգալի մասի թեկնածուն՝ բարդացնելով Մ.Ահմադինեժադի վերընտրման հնարավորությունը:

Թեհրանի քաղաքապետ Ա.Քալիբաֆը մեկ այլ հնարավոր թեկնածու է համարվում, սակայն նրա առաջադրման հնարավորությունը մեծ մասամբ կախված կլինի հենց Ա.Լարիջանի հետ պայմանավորվածություններից, քանի որ վերջին խորհրդարանական ընտրություններում Թեհրանի քաղաքապետն ու մեջլիսի նորընտիր նախագահը հանդես են եկել մեկ քաղաքական դաշինքի շրջանակներում:

## Արտաքին մարտահրավերները

Վերջին ամիսների ընթացքում բավական բարդ են Իրանի շուրջ ընթացող արտաքին քաղաքական զարգացումները: Միջուկային հիմնախնդրի վերաբերյալ Իրանի կոշտ դիրքորոշումը գրեթե փոփոխության չի ենթարկվել, ինչի արդյունքում հուլիս-օգոստոս ամիսների ընթացքում Իրանի միջուկային հիմնախնդիրը, հավանաբար, նորից կքննարկվի ՄԱԿ ԱԽ-ում: Եթե դատենք Իրանի նախագահի հայտարարություններից, ապա դիրքորոշման մեղմացում մոտակա ամիսների ընթացքում սպասել չի կարելի: Իսկ սա կարող է բերել նոր պատժամիջոցների եւ Իրանի հետագա մեկուսացման: Պատժամիջոցների նոր փաթեթը, որը կարող է օգտագործվել Իրանի դեմ, հնարավոր է անմիջականորեն ազդի Իրանի՝ արտաքին աշխարհի հետ ֆինանսական հարաբերությունների վրա: Սրա վկայությունն է հունիսի 9-ին նախագահ Մ.Ահմադինեժադի կոչը Իրանի գործարարներին, պետական եւ մասնավոր կառույցներին՝ բոլոր ֆինանսական միջոցները եվրոպական բանկերից դուրս բերելու մասին: Ըստ որոշ տվյալների, եվրոպական բանկերում իրանական հաշիվները կազմում են շուրջ 80 մլրդ ԱՄՆ դոլար, եւ իրանական հաշիվների հնարավոր «ծերբակալումը» կարող է լուրջ հարված հասցնել իրանական տնտեսությանը: Այստեղ պետք է հաշվի առնել եւս երկու հանգամանք.

❖ Իրանական միջոցների դուրսբերումը եվրոպական բանկերից կարող է վնաս հասցնել նաեւ ֆինանսական կայունությանը բուն եվրոպայում: Սա նշանակում է, որ Իրանի նախագահի կոչը կարող է ունենալ նաեւ քարոզչական բնույթ եւ եվրոպացիների դիրքորոշման վրա ազդեցության լծակ հանդիսանալ:

❖ Իրանի նախագահի քաղաքականությունից բավական դժգոհ են իրանական գործարար շրջանակները, որոնք անմիջականորեն կապված են ԵՄ երկրների հետ, քանի որ հենց եվրոպան է Իրանի առաջին տնտեսական գործընկերը թե՛ ապրանքների ներկրման, թե՛ դրանց արտահանման առումով: Ուստի, նախագահի կոչը նաեւ հարված է Իրանի գործարար շրջանակներին, որոնք չեն կարող գալիք նախագահական ընտրություններին պասիվ մասնակցություն ունենալ՝ չպաշտպանելով այս կամ այն թեկնածուին: Բացառված չէ, որ Իրանի նախագահի մոտեցումը երկրի գործարարների վրա լուրջ լծակ ձեռք բերելու հետ է կապված նաեւ:

Իրանի համար բավական կարեւոր հիմնախնդիր է, թե ինչպես կընթանա իրանական հարցի հերթական քննարկումը ՄԱԿ ԱԽ-ում: Չայտնի է, որ վերջին երկու տարվա ընթացքում Իրանի դեմ լուրջ

պատժամիջոցների կիրառումը հնարավոր չի եղել ԱԽ մշտական երկու անդամներ Ռուսաստանի եւ Չինաստանի դիրքորոշման պատճառով: Այս երկու երկրների դիրքորոշման հնարավոր փոփոխության մասին մտահոգվելու համար կան լուրջ պատճառներ:

*Առաջին.* Ռուսաստանում կա ընտրված նոր նախագահ, որը չի կարող սեփական մոտեցումներ չունենալ արտաքին քաղաքական հարցերի շուրջ: Բացի այդ, եւ՛ Ռուսաստանում, եւ՛ արտերկրում Ռ.Մեդվեդևի հետ են կապում Ռուսաստան-Արեւմուտք հարաբերություններում լարվածության թուլացման հնարավորությունը, իսկ լարվածության թուլացումն անմիջականորեն կապված է միջազգային սուր հարցերի վերաբերյալ դիրքորոշումների հետ: Իրանի համար կարեւորագույն խնդիր է, թե ռուս-ամերիկյան հարաբերությունների հետագա ընթացքն ինչպես կարող է ազդել իրանական հարցերում Ռուսաստանի դիրքորոշման վրա:

*Երկրորդ.* Չինաստանում սպասվելիք Օլիմպիական խաղերի նախօրեին ԱՄՆ-ի կողմից հակաչինական քարոզչությունը Վաշինգտոնի ձեռքին դարձել է ոչ միայն ԱՄՆ-Չինաստան, այլ նաեւ Չինաստան-արտերկիր հարաբերությունների վրա ազդեցություն գործելու լրջագույն լծակ: Հակաչինական քարոզչությունը համաշխարհային տեղեկատվական դաշտում գերակշիռ դիրքեր ունեցող ԱՄՆ-ի կողմից ստիպել է Պեկինին ակտիվացնել չին-ամերիկյան բանակցությունները տարբեր մակարդակներում, որոնք կոչված են լուծելու Վաշինգտոնի եւ Պեկինի համար խնդրահարույց մի շարք հարցեր: Եվ այս պարագայում Իրանի համար խիստ կարեւոր է, թե ինչ փոփոխություն կկրի Պեկինի դիրքորոշումը իրանական միջուկային հիմնախնդրի վերաբերյալ:



**ԼԻՔԱՆԱՆԸ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՃԳՆԱԺԱՄԻ  
ՀԱՂԹԱՀԱՐՄԱՆՆ ԸՆԴԱՌԱՋ  
Լիլիթ Հարությունյան**

Դեռևս 1970-ականներից Լիբանանում իսլամադավանների, հատկապես շիաների թվաքանակի կտրուկ աճը, նրանց քաղաքական և սոցիալ-տնտեսական ակտիվությունը, խախտեցին 1943թ. «Ազգային դաշինքով» կրոնադավանական համայնքների միջև ձեռք բերված փխրուն հավասարակշռությունը: Ուժերի նոր հարաբերակցությունը, որ այսօր առկա է Լիբանանում, իր պատշաճ արտացոլումը դեռևս չի գտել կրոնադավանական համակարգում, չնայած 1989թ. Տաիֆի համաձայնագրով դրանում որոշ փոփոխություններ արվեցին: Արդյունքում, շիական «Հիզբալլահ» շարժումն այսօր ձեռնոց է նետում «Ազգային դաշինքով» իսլամադավան համայնքների շարքում ամենաազդեցիկը համարվող սուննի համայնքին: Մյուս կողմից, այն հմտորեն օգտագործում է ներկայումս մարոնիական համայնքում առկա հակասությունները: Դրավառ ապացույցն է մարոնի գեներալ Միշել Աունի հետ «Հիզբալլահի» ռազմավարական դաշինքը:

Լիբանանի ներքաղաքական հակասությունների հերթական սրումը կապված է 2008թ. մայիսի սկզբի իրադարձությունների հետ, երբ Լիբանանի աշխատավորների համադաշնության կազմակերպած գործադուլը վերաճեց զինված ընդհարման, մի կողմից՝ կառավարության կողմնակիցների /Սաադ Հարիրիի գլխավորած «Մուսթակբալ» շարժում և Վալիդ Ջունբլատի ղեկավարած «Առաջադիմական-սոցիալիստական» կուսակցություն/, մյուս կողմից՝ ընդդիմադիր ուժերի, հիմնականում «Հիզբալլահ» շարժման զինյալների միջև:

Բախումները բռնկվեցին արևմտյան Բեյրութում, ապա ընդգրկեցին հյուսիսային Լիբանանը, Բեքաայի հովիտը և Լեռնալիբանանը: Ընդդիմությունը շատ արագ իր վերահսկողությունը հաստատեց արևմտյան Բեյրութում և Լեռնալիբանանի որոշ շրջաններում: «Հիզբալլահի» զինված մարտիկները փակեցին նաև դեպի Բեյրութի միջազգային օդանավակայան և նավահանգիստ տանող մայրուղիները: Այս ամենին զուգահեռ երկրի կառավարության որոշմամբ պետական, մասնավոր և հասարակական հաստատությունների անվտանգության ապահովումը հանձնվեց բանակի զորամիավորումներին:

Իր վերահսկողությունը սահմանելու ընթացքում բանակը դրսևորում էր խիստ զգուշավորություն՝ բախումների մեջ ներքաշվելուց խուսափելու նպատակով: Նշենք, որ լիբանանյան բանակը ևս ունի կրոնադավանական կառուցվածք:

Մայիսի 5-ին Լիբանանի կառավարությունն ընդունեց երկու որոշում, որոնց համաձայն պաշտոնանկ արվեց «Հիզբալլահը» ներկայացնող Բեյրութի միջազգային օդանավակայանի անվտանգության ծառայության ղեկավարը, ինչպես նաև վերահսկողություն սահմանվեց «Հիզբալլահի» հաղորդակցային ցանցի նկատմամբ: Այս որոշումների ընդունումը դարձավ զինված բախումների բռնկման առիթ:

Ոչ պաշտոնական պայմանավորվածության համաձայն՝ թե՛ ընդդիմադիր և թե՛ կառավարամետ քրիստոնեական ուժերը, այդ թվում նաև լիբանանահայ քաղաքական կուսակցությունները, համաձայնության էին եկել չներքաշվել քաղաքացիական բախումներ մեջ:

Մայիսի 9-ին Լիբանանում գործող լիբանանահայ քաղաքական կուսակցությունների ղեկավարների հանդիպման ընթացքում որոշում ընդունվեց հակամարտող կողմերից որևէ մեկին չպաշտպանելու և նրանց միջև երկխոսության հաստատմանը նպաստելու վերաբերյալ: Համայնքը հավատարիմ մնաց դեռևս 1975թ. բռնկված երկրորդ քաղաքացիական պատերազմի ընթացքում որդեգրած դրական չեզոքության քաղաքականությանը:

Վերջին յոթ ամիսների ընթացքում բավական ակտիվացել էին Արաբական պետությունների լիգայի /ԱՊԼ/ շրջանակներում լիբանանյան ճգնաժամի կարգավարմանն ուղղված արաբական ջանքերը: Լիբանանում զինված բախումների խորացումն ու հնարավոր քաղաքացիական պատերազմի բռնկումը կանխելու նպատակով, մայիսի 11-ին Կահիրեում ԱՊԼ արտաքին գործերի նախարարների խորհրդի նիստում կազմավորվեց հանձնախումբ, որի ղեկավարումը ստանձնեց Կատարի վարչապետ և արտաքին գործերի նախարար Համադ բեն Ջասեն բեն Ջաբար Ալ-Թանին: Լիբանանի տարբեր քաղաքական ուժերի ղեկավարների հետ երկարատև և լարված բանակցություններից հետո հանձնախմբին հաջողվեց որոշակի հաջողությունների հասնել:

Վերաբացվեց Բեյրութի միջազգային օդանավակայան տանող երթևեկությունը, օդանավակայանի վերահոսկողությունն առժամանակ դրվեց լիբանանյան բանակի վրա, ինչպես նաև վերականգնվեց Բեյրութի նավահանգստի գործունեությունը: Հակամարտող կողմերը համաձայնության եկան զինված բախումները դադարեցնելու, ինչպես

նաև պայմանավորվեցին ԱՊԼ-ի հովանու ներքո բանակցությունները Կատարի մայրաքաղաք Դոհայում շարունակելու վերաբերյալ:

Կրակի դադարեցմանը մեծապես նպաստեց այն հանգամանքը, որ ԱՊԼ հանձնախմբի հորդորով Լիբանանի կառավորությունը չեղյալ հայտարարեց մայիսի 5-ին ընդունած իր որոշումները: Արդյունքում, «Հիզբալլահի» ներկայացուցիչը պահպանեց միջազգային օդանավակայանի անվտանգության ծառայության ղեկավարի պաշտոնը, «Հիզբալլահի» հաղորդակցային ցանցը կրկին դուրս մնաց կառավարության վերահսկողությունից: «Հիզբալլահի» ոչ միայն չմեկուսացվեց, այլ նաև վերահաստատեց Լիբանանի ազդեցիկ քաղաքական ուժերից մեկը լինելու իր կարգավիճակը:

Սաուդյան Արաբիայի արտաքին գործերի նախարար Սաուդ Ալ-Ֆեյսալը մայիսի 13-ին տված ասուլիսում լիբանանյան բոլոր ուժերին կոչ արեց աջակցել ԱՊԼ ջանքերին և գնալ համալիբանանյան քաղաքական երկխոսության ճանապարհով: Ալ-Ֆեյսալը կրկին դիմեց տարածաշրջանային ուժերին /բնականաբար հասցեատերերը Սիրիան և Իրանն էին/, կոչ անելով հարգել Լիբանանի անկախությունն ու ինքնիշխանությունը, դադարել միջամտել նրա ներքին գործերին, հրաժարվել միջհամայնքային հակասություններ հրահրելուց և թույլ տալ Լիբանանին ինքնուրույն լուծել սեփական խնդիրները:

Մայիսի 21-ին Կատարի մայրաքաղաքում հայտարարվեց ԱՊԼ հովանու ներքո լիբանանյան «ազգային երկխոսության» «հաջող ավարտի» մասին: «Երկխոսության» մասնակիցներն ընդունեցին «Դոհայի համաձայնագիրը»:

Չամաձայնագրի առաջին կետով՝ խորհրդարանի խոսնակը պետք է հրավիրեր խորհրդարանի նիստ, որում նախագահ էր ընտրվելու համաձայնեցված թեկնածու, Լիբանանի զինված ուժերի հրամանատար գեներալ Միշել Սուլեյմանը: Խորհրդարանի նիստի գումարման պատասխանատվությունը դրվեց «Ամալ» շարժման ղեկավար և խորհրդարանի խոսնակ Նաբիհ Բերրիի վրա, որը ներկայացնում է լիբանանյան ընդդիմությանը:

Չամաձայնագրի երկրորդ կետը նախատեսում էր, որ նախագահի ընտրություններից հետո պետք է կազմավորվի 30 նախարարից կազմված «ազգային միասնության» կառավարություն, որում 16 նախարարական տեղ կստանա իշխող մեծամասնությունը, 11 տեղ՝ ընդդիմությունը, երեք նախարար կնշանակի նախագահը:

Մայիսի 22-ին Լոնդոնում լույս տեսնող սաուդական «Շարկ ալ-

առևսատ» պարբերականին տված իր հարցազրույցում Լիբանանի իշխող մեծամասնության ղեկավար Սաադ Չարիրին ընդգծեց լիբանանյան ճգնաժամի կարգավորման գործում Սաուդյան Արաբիայի և Եգիպտոսի նեո ներդրումը: Նա նշեց նաև, որ այսուհետև ևս վերոնշյալ երկրները կարևոր դեր են խաղալու լիբանանյան գործերում: Այս փաստը դժգոհություն առաջացրեց Սիրիայում, որը Լիբանանը մշտապես համարում է «պատմական Սիրիայի» ամբաժան մաս և իր ազդեցության գոտի: 2005թ. Լիբանանից սիրիական զորամիավորումների դուրս բերումից հետո Դամասկոսը հնտորեն օգտագործում է Սիրիա-Իրան-«Հիզբալլահ» ռազմավարական համագործակցությունը՝ անուղղակիորեն ազդելով ներլիբանանյան զարգացումների վրա:

Համաձայնագրի երրորդ կետը վերաբերվում է նոր ընտրական օրենքի ընդունմանը, որի մշակումը հանձնարարվեց «ընտրական օրենքի պատրաստման ազգային հանձնաժողովին»: Այն ղեկավարելու է իշխող մեծամասնության նախարարներից մեկը:

Համաձայնագիրը նախատեսում է նաև քաղաքական նպատակների իրագործման հարցում հրաժարում զենքի օգտագործումից և պետության դերի ամրապնդում Լիբանանի ներքին կյանքում:

Շուրջ յոթ ամիս շարունակվող հակամարտության, ապա նաև արյունալի բախումներից հետո /նշենք, որ մայիսին կառավարության կողմակիցների և «Հիզբալլահի» միջև բախումներում զոհվեց 65 մարդ. դրանք ամենախոշոր բախումներն էին 1990թ. երկրորդ քաղաքացիական պատերազմի ավարտից հետո/ Լիբանանի խորհրդարանը մայիսի 25-ին նախագահ ընտրեց Միշել Սուլեյմանին: Իշխող մեծամասնությունը վարչապետի պաշտոնում կրկին առաջադրեց Ֆուադ Սինիորայի թեկնածությունը, որին էլ մայիսի 28-ին նոր նախագահը հանձնարարեց «ազգային միասնության կառավարության» ձևավորումը:

Այս ամենը հույս է ներշնչում, որ Լիբանանը հնարավորություն ունի վերադառնալ հարաբերական կայունության շրջան: Կրոնահամայնքային կառավարման համակարգ ունեցող այս երկրում, որտեղ բախվում են տարածաշրջանային և միջազգային ուժերի շահերը, պետական իշխանության թուլության պայմաններում քաղաքական ճգնաժամերը նրա պատմական զարգացման անբաժան մասն են: Թեև Միշել Սուլեյմանի ընտրությունը վերջ դրեց երկրում 2007թ. նոյեմբերից շարունակվող նախագահական վակուումին, սակայն վերջինիս դիրքերը բավական խոցելի են՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ նոր

նախագահը պետք է խուսանավի լիբանանյան քաղաքականության տարբեր բևեռների միջև՝ դառնալով յուրահատուկ հավասարակշռող գործոն:

Ակնհայտ է, որ Լիբանանում ընթացող զարգացումները նաև մերձավորարևելյան հակամարտության դեռևս չկարգավորված լինելու հետևանք են: Փաստենք, որ Իսրայելի և Սիրիայի միջև ցանկացած հնարավոր խաղաղություն իր ուղղակի անդրադարձը կունենա մերձավորարևելյան տարածաշրջանի, այդ թվում նաև Լիբանանի վրա: Այդ հանգամանքը ոչ միայն կարող է թուլացնել Իրանի և Սիրիայի անուղղակի ազդեցությունը լիբանանյան գործերում, այլ նաև կարող է արագացնել «Հիզբալլահի» ռազմական թևի վերացման և նրա՝ քաղաքական կուսակցության վերակազմավորման գործընթացը:

**ԳԱԶԱՅԻՆ OPEC. ԻՐԱՆԻ ԵՎ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ  
ԱՇԽԱՐՀԱՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԱՇՎԱՐԿՆԵՐԸ  
Ն. Տեր-Օգանով**

Արդեն յոթ տարուց ավելի է, ինչ Արեւմուտքը, մասնավորապես՝ Եվրոպական Միությունը, առանձնակի երկյուղով է նայում OPEC-ին նմանատիպ գազային կարտելի ստեղծման փորձերին: Ինչպես հայտնի է, գազային OPEC-ի ստեղծման բուն գաղափարը պատկանում է Իրանին ու Կատարին: Դեռևս 2001թ. Թեիրանում անցկացվեց գազ արտահանող երկրների համաժողովի՝ GECF-ի (Gas Exporting Countries Forum) առաջին նիստը, որի աշխատանքներին մասնակցում էին Իրանը, Ռուսաստանը, Թուրքմենստանը, Կատարը, Օմանը, Ալժիրը» Նիգերիան, Բրունեյը, Ինդոնեզիան եւ Մալայզիան: Հարկ է նշել, որ մինչ այժմ տվյալ հարցի շուրջ բանավեճը մերթ մարում է, մերթ բռնկվում նոր ուժով՝ հարկադրելով բնական գազ սպառող երկրներին մտածել, թե ինչպես դիմակայել գազային կարտելի կազմավորման սպառնալիքին: 2006թ. նոյեմբերին ՆԱՏՕ-ի երկրների տնտեսության հարցերով համաժողովի փորձագետները հրապարակեցին գաղտնի զեկույց, որտեղ հեղինակները գազային OPEC ստեղծելու Ռուսաստանի հնարավորության առիթով, ուր կարող են մտնել սույն գաղափարի շատ կողմնակիցներ, մտավախություն էին արտահայտում: ԵՄ անհանգստությունը հատկապես աճեց Եվրամիություն բնական գազի երկու խոշորագույն մատակարարների՝ ռուսական «Գազպրոմ»-ի եւ ալժիրյան «Սոնատրակ»-ի միջեւ 2006թ. առեւտրային գործարքի կնքումից հետո:

Այնուամենայնիվ, բնական գազ արտադրող երկրները մինչ այժմ միջազգային գազային կարտելի ստեղծման հարցի շուրջ չեն կարողանում վերջնական համաձայնության գալ: Կոնսենսուսի չկարողացան հասնել նաեւ Կատարի մայրաքաղաք Դոհայում կայացած հերթական համաժողովի մասնակիցները: Դոհայի անարդյունավետ հանդիպումն օրակարգից չհանեց ձեւավորված էներգետիկ սպառնալիքի զգացումը: Ինչպես այն ժամանակ նշեցին տեսաբանները, անհաջողության հիմնական պատճառը բնական գազի փոխադրման առանձնահատկություններն են: Բանն այն է, որ բնական գազը հիմնականում մատակարարվում է խողովակաշարերով, իսկ գազի մատակարարման պայմանագրերը կնքվում են երկար ժամանակով: Այդ պատճառով, տվյալ գաղափարի կողմնակիցները մինչ այժմ չեն կարողանում այն կյանքի կոչել:

Ինչեւէ, ԱՄՆ-ում նման գազային կարտելի ստեղծման հնարավորությունն ընդունեցին մեծագույն զգուշավորությամբ: 2007թ. ապրիլին ամերիկյան սենատի իրավաբանական հարցերի հանձնաժողովը ԱՄՆ գլխավոր դատախազին թույլատրեց հետապնդել այն երկրների կառավարություններին, որոնք որոշել են միավորվել գազային կամ նավթային կարտելներում: Ինչպես պնդում է ամերիկյան հետազոտող Ա.Քոենը՝ «Յերիթիջ Ֆաունդեյշն» կենտրոնից, ներկայումս գազային OPEC-ի ստեղծման գաղափարի առաջ մղման հիմնական դերակատարները հանդիսանում են Ռուսաստանը եւ Իրանը, քանզի ապագայում «նրանք են առավել չափով օգտվելու իրենց աշխարհաքաղաքական մկաններից»:

Վերջերս Թեհրանում կայացավ բնական գազ արտահանողների այս տարվա առաջին նիստը, որին մասնակցում էին 12 երկրների ներկայացուցիչներ: Ըստ Իրանի նավթային արդյունաբերության նախարար Յուսեյն Նուրզարեի, GECF-ի մասնակիցները ջանքեր են գործադրում գազային OPEC-ի ստեղծման համար: Սակայն, երբ հերթական անգամ հնչեց այդ գաղափարը, սպառող երկրներն անմիջապես հանդես եկան դրա դեմ: Իսկ ինչո՞ւ են նրանք դեմ, չէ՞ որ գոյություն ունի OPEC, որը, կարծես թե, իրեն արդարացնում է: Ինչո՞ւ միջազգային գազային կարտելի ստեղծման գաղափարն այդքան կշտամբանքի արժանացավ: Այս հարցի պատասխանն, անտարակույս, ընկած է աշխարհաքաղաքական հարթությունում: Յարցն այն է, որ նման գաղափարն արտահայտվել է գազային OPEC-ի ստեղծման ամենակտիվ ջատագովներ Ռուսաստանի եւ Իրանի կողմից:

*Առաջին.* Ինչպես հայտնի է, Արեւմուտքը տենդորեն ռուսական գազի այլընտրանք է փնտրում: Այնտեղ գտնում են, որ մատակարարման ճանապարհների դիվերսիֆիկացումը հանդիսանում է Արեւմուտքի էներգետիկ անվտանգության հիմնական երաշխավորը: Ժամանակին Անդրկովկասում եւ Կենտրոնական Ասիայում էներգամատակարարման այլընտրանքային աղբյուրներ գտնելու ցանկությունն Արեւմուտքին դրդեց նավթամուղների եւ գազամուղների շինարարության տարբեր նախագծերի մշակման: Եթե մեծ նախագծի առաջին կեսը՝ Բաքու-Թբիլիսի-Ջեյհան նավթամուղը եւ Բաքու-Թբիլիսի-Էրզրում գազամուղը, հաջողությամբ իրականացվեց, ապա նույնը չի կարելի ասել նրա երկրորդ կեսի՝ «Նաբուքո»-ի մասին, որի պատճառով էլ մեծ հաշվով նախաձեռնվեց դեպի Արեւելք «հարձակումը»: Այսպիսով, մինչ օրս Ռուսաստանը պահպանում է իր դիրքերը որպես հետխորհրդային տարածքից էներգապաշարների հիմնական մատակարար: Միաժամանակ, Իրանը ջանում է, թեւս ապարդյուն, առաջ մղել իր տարածքով թուրքմենական եւ դազախական գազը երկու ուղղությամբ տարանցելու նախագիծը: Առաջին ուղղությունը հարավ-արեւելք է՝ ապագա Իրան-Պակիստան-Յնդկաստան

գազամուղի հետ հեռանկարային միացմամբ: Երկրորդ ուղղությունը՝ Զյուսիսային Իրանի վրայով դեպի Թուրքիա եւ այնուհետեւ Եվրոպա: Չնայած դրան, Իրանը հարեւան երկրների հետ ընդլայնում է գազային ոլորտի կոոպերացիան: Վերջերս թուրքմենական կողմի հետ 2008–2009թթ. Իրան բնական գազի մատակարարման մասին կնքվեց համաձայնագիր:

*Երկրորդ.* չնայած իրանական գազի ողջ գրավչությանը, ինչպես նաեւ Կենտրոնական Ասիայից Իրանի վրայով դեպի Արեւմուտք գազատարի շինարարությանը, որն, անշուշտ, ինչ-որ չափով կարող է ռուսական գազին այլընտրանք ծառայել, այնուամենայնիվ, Արեւմուտքը, քաղաքական նկատառումներով՝ կապված հիմնականում իրանական միջուկային ծրագրի զարգացման հետ, հրաժարվում է Իրանը դիտել որպես այլընտրանքային տարբերակ: Թեեւ առանձին եվրոպական երկրներ, օրինակ՝ Ավստրիան, բնական գազի մատակարարման վերաբերյալ Իրանի հետ սեպարատ համաձայնագիր կնքեցին, սակայն, ընդհանուր առմամբ, իրանական գազային նախագիծն Արեւմուտքում անտեսվում է:

Հետեւաբար, ո՛չ գազի մատակարարման ռուսական մենաշնորհը, ո՛չ իրանական գազի այլընտրանքը չեն համապատասխանում Արեւմուտքի շահերին: Եթե դա այդպես է, ապա գազի երկու խոշորագույն արտադրողների՝ Ռուսաստանի եւ Իրանի միավորումը միջազգային կարտելում առավել եւս չի կարող համապատասխանել այդ էներգապաշարը սպառող արեւմտյան երկրների շահերին: Այս կապակցությամբ իրանական «Աբրար» թերթը գրում է. «Արեւմուտքը չի ցանկանում, որ աշխարհում գազ արտադրող երկրները միավորվեն եւ օգտագործող երկրների առջեւ ներկայանան մեկ դեմքով: Ուստի ԱՄՆ-ն ու Եվրոպան Ռուսաստանի եւ Իրանի կողմից կարտելի ստեղծման հնարավորությունը դիտում են որպես համաշխարհային էներգամատակարարման համար երկարաժամկետ լուրջ սպառնալիք»: Ըստ թերթի, ԱՄՆ-ն ու Եվրոպական երկրները հանդգնած են, թե իրենց հակառակորդների կողմից այդպիսի կազմակերպության ստեղծումը կհանգեցնի գազային դաշինքի ձեւավորման, որը կունենա վառ արտահայտված աշխարհաքաղաքական երանգ:

*Երրորդ.* արեւմտյան երկրները երկյուղում են, որ գազային OPEC-ի ստեղծման դեպքում՝ հաշվի առնելով գազի համաշխարհային պաշարներում Ռուսաստանի եւ Իրանի մասնաբաժինները, կազմակերպության գազային քաղաքականությունը սահմանելիս (այդ թվում նաեւ գնագոյացման հարցում)՝ նրանց ձայները կարող են որոշիչ լինել: Արեւմուտքը հանդգնած է, որ գազային OPEC-ի ստեղծման դեպքում բնական գազի գները կտրուկ կաճեն: Օրինակ, 1000մ<sup>3</sup> հեղուկ բնական գազի գինը 265 ԱՄՆ դոլարից կարող է կտրուկ բարձրանալ մինչեւ 350 եւ նույնիսկ 400



դուլար: Նման միջազգային կարտելի ծնունդը դիտվում է որպես սպառնալիք եվրոպական Միության էներգետիկ անվտանգությանը: Արևմուտքի մտահոգություններն անհիմն չեն, քանզի պաշարների մենաշնորհը կհանգեցնի նրան, որ կարտելի անդամները միմյանց հետ չեն մրցակցի, այլ զբաղված կլինեն գնագոյացման հարցում ընդհանուր դիրքորոշման մշակմամբ: Գազային OPEC-ի հակառակորդներն ամենից շատ երկյուղում են նրանից, որ նման կազմակերպության ստեղծումը զգալի ազդեցություն կունենա աշխարհաքաղաքական գլոբալ զարգացումների վրա:

*Չորրորդ.* անդամությունը միջազգային գազային կարտելին Իրանին հնարավորություն կընձեռի արագորեն առաջ մղել սեփական գազային նախագծերը, ինչը հակասում է այդ երկրի հանդեպ ամերիկյան տնտեսական պատժամիջոցներին:

Չնայած միջազգային գազային կարտելի գաղափարի նկատմամբ Արևմուտքի երկրների ակնհայտ բացասական դիրքորոշմանը, Իրանն առանձին գազարդյունահանող երկրների հետ կոոպերացիայի ուղղությամբ քայլեր է ձեռնարկում: Այն, առաջին հերթին, վերաբերում է Ռուսաստանին: Գազի «Հարավային Պարս» եւ «Հյուսիսային Ազադեզան» հանքավայրերի համատեղ շահագործման հարցի շուրջ ռուսական «Գազպրոմ»-ի հետ սկսված բանակցությունները կարելի է համարել գազային ոլորտում երկկողմանի կոոպերացիայի մեկնակետ: Բայց, ինչպես երեւում է, «Գազպրոմ»-ի գործունեությունն Իրանում դրանով չի սահմանափակվում: Ըստ Հոսեյն Նոուզարեի հայտարարության, ռուսական կողմի հետ «լուրջ աշխատանքներ են տարվում գազային համատեղ ընկերության ստեղծման ուղղությամբ»: Ս.թ. փետրվարին, «Գազպրոմ»-ի ղեկավար Ալեքսեյ Միլլերի թեհրան այցի ժամանակ, «Բնական գազի փոխադրման, մաքրման եւ մարքեթինգի ուղղությամբ համատեղ գործունեության մասին» ստորագրվեց համաձայնագիր: Արևմուտքում, որտեղ ողջունում են ֆրանսիական «Տոտալ» եւ անգլո-հոլանդական «Դատչ-Շել» ընկերությունների պատրաստակամությունը՝ հրաժարվել իրանական գազային նախագծերից կամ, զոնե, արգելակել դրանք, Իրանում «Գազպրոմ»-ի ակտիվացումն, անտարակույս, կարող է միայն բացասական անդրադարձ առաջացնել:

## **ՌՈՒՍԱՍՏԱՆ. ԶԱՐԳԱՑՄԱՆ ՍՑԵՆԱՐՆԵՐ**

**Էներյու Կաշինս** – Վաշինգտոնի Ռազմավարական եւ միջազգային հետազոտությունների կենտրոնի Եվրասիայի եւ Ռուսաստանի ծրագրի տնօրեն:

**Հարց**– Արտաքին ու ներքին ի՞նչ հիմնական գործոններ են ազդելու Ռուսաստանի տնտեսական եւ քաղաքական ուղեգծի վրա առաջիկա 10 տարիներին:

**Պատ.**– Մենք կատարել ենք հետազոտություն, որի արդյունքները տեղ են գտել «Ռուսաստանի այլընտրանքային ապագան մինչեւ 2017թ.» զեկույցում: Այնտեղ ի հայտ են բերված երկու գործոն, եւ դրանցից գլխավորը, թերեւս, նավթի գինն է: Այն կորոշի, թե էներգակիրների վաճառքից ինչպիսի եկամուտ է մտնելու ռուսական տնտեսություն:

Ես կարծում եմ՝ վերելքը, որ Ռուսաստանն այսօր ապրում է, չի սահմանափակվում միայն էներգետիկ հատվածով: Երկրի ղեկավարությունը հասկանում է, որ Ռուսաստանը չափից ավելի կախվածության մեջ է էներգակիրների արտահանումից, եւ որ այդ կախվածությունը Ռուսաստանի թույլ կողմն է: Երկրորդ գործոնն ավելի շատ կապված է բուն քաղաքական համակարգի հետ, որին հատուկ է իշխանության գերկենտրոնացված եւ անձնավորված բնույթը: Այն միշտ էլ եղել է Ռուսաստանի կարելի առանձնահատկությունը: Մեկ մարդու ձեռքում գտնվող՝ թույլ քաղաքական ինստիտուտներով մեծ իշխանությունը հող է ստեղծում անկայունության համար:

**Հարց**– Ամերիկյան շատ փորձագետներ գտնում են, թե Ռուսաստանը ժողովրդագրության ու բնակչության առողջության հետ լուրջ խնդիրներ ունի:

**Պատ.**– Անշուշտ, ժողովրդագրական խնդիրը շատ սուր է դրված: Բնակչության կրճատումը, բժշկական սպասարկման բարձր գինը խիստ սահմանափակում են տնտեսական աճի հնարավորությունները: Սակայն, հետազոտությունների ընթացքում մենք եկանք եզրակացության, որ ճիշտ միջոցների օգնությամբ այդ խնդիրը կարելի է վերահսկել: Առայժմ դա տեղի չի ունենում: Անշուշտ, ռուսական կառավարությանն այդ խնդիրները լրջորեն մտահոգում են, սակայն ամեն ինչ կախված է նրանից, թե որքան արդյունավետ նա կկարողանա դրանք հաղթահարել: Մենք արդեն այժմ

տեսնում ենք, թե ինչպես է ժողովրդագրական անկումն ազդում աշխատանքի շուկայի վրա, եւ այդ գործընթացն ապագայում կարող է միայն սաստկանալ:

*Չարք* – Դուք պնդում եք, թե Դմիտրի Մեդվեդեւն իր իշխանության տարիներին կծգտի բարելավել հարաբերություններն Արեւմուտքի հետ: Ինչո՞ւ եք այդպես մտածում:

*Պատ.* – Չնայած վերջին տարիների տպավորիչ տնտեսական աճին, Ռուսաստանը դեռեւս գտնվում է վերականգնման երկարատեւ շրջանի սկզբնական փուլում: Եթե նայում ենք խնդիրներին, որոնք իր առջեւ դրել է ռուսական կառավարությունը, տեսնում ենք, որ Ռուսաստանին հարկ է լինելու շատ երկար ճանապարհ անցնել, մինչեւ որ հասնի ցանկալի տնտեսական նպատակներին:

Մոտակա 10-15 տարիներին նրան պետք է հատուկ ուշադրություն դարձնել արագացող տնտեսական աճի ապահովմանը, ինչը հիմք կհանդիսանա աշխարհում Ռուսաստանի հզորության ամրապնդման համար: Այսպիսով, առաջատար տեղությունների եւ, ընդհանրապես, ցանկացած երկրի հետ առճակատումը՝ դա այն է, որից Ռուսաստանին սկզբունքորեն հարկավոր է խուսափել: Ես չեմ կարծում, որ նա ցանկանում է կրկնել Սառը պատերազմի փորձը: Այն չափազանց ծախսատար էր՝ հաշվի առնելով, թե ինչպիսի միջոցներ էին ուղղվում ռազմաարդյունաբերական համալիրին, եւ դա Խորհրդային Միության փլուզման գլխավոր պատճառներից մեկն էր:

*Չարք* – Ոմանք Մոսկվային քննադատում են անհետեւողական արտաքին քաղաքականության համար: Այդ առիթով Դուք ի՞նչ եք մտածում:

*Պատ.* – Ես կարծում եմ՝ այսօր ռուսական արտաքին քաղաքականությունում ավելի հետեւողականություն եւ ներդաշնակություն կա, քան 10 կամ 15 տարի առաջ: Այժմ իշխանական համակարգում առավել կարգ ու կանոն է, քան նախկինում: Երբեմն արտաքին քաղաքական որոշումները եւ արտաքին քաղաքականության նպատակները միմյանց հակասում են, սակայն դա ոչ միայն Ռուսաստանի, այլեւ, գործնականում, աշխարհի մնացած բոլոր երկրների խնդիրն է, այդ թվում եւ ԱՄՆ:

Երկրների մեծ մասում արտաքին քաղաքականությունը կրում է «ռեակտիվ» բնույթ: Այն եղել է ՌԴ արտաքին քաղաքականության թույլ կողմը, ինչը միանգամայն հասկանալի է՝ հաշվի առնելով, թե ինչպիսի աղետալի վիճակում էր գտնվում Ռուսաստանը վերջին տարիներին: Վերելքը սկսվեց վերջերս եւ ընթանում է շատ արագ տեմպերով: Ես կարծում եմ, որ այժմ Ռուսաստանը պետք է իր առջեւ հարց դնի՝ ինչպես

ստեղծել գլոբալ կառավարման նոր ինստիտուտներ եւ անհրաժեշտ մեխանիզմներ, այլ ոչ թե լինել այնպիսի երկիր, որն ընդունակ է միայն «ոչ» ասել:

*Չարդ* – Նախագահ Մեդվեդեւի օրոք ինչպե՞ս կզարգանան Ռուսաստանի հարաբերությունները հարեւանների հետ:

*Պատ.* - Ես կարծում եմ, որ Ռուսաստանի հարաբերություններն իր հարեւանների՝ հատկապես Ուկրաինայի ու Վրաստանի հետ լինելու են ռուս-ամերիկյան եւ, ընդհանրապես, Ռուսաստանի եւ Արեւմուտքի հարաբերությունների ամենավիճելի պահերից մեկը: Կարելորագույն հարցն է՝ ինչպես են բաժանվելու արտաքին քաղաքական լիազորությունները Պուտինի ու Մեդվեդեւի միջեւ: Ներկայումս դա հասկանալի չէ:

Երկրորդ հանգամանքը. ռուսական քաղաքականությունն Ուկրաինայի եւ Վրաստանի նկատմամբ զգալի չափով կախված է նրանից, թե ինչպես իրեն կպահի ՆԱՏՕ-ն եւ որքան ագրեսիվ կերպով Յուլիսատլանտյան դաշինքը կիրականացնի այդ երկու երկրներին անդամություն տրամադրելու ծրագիրը: Ակնհայտ է, որ մոտ ապագայում այդ հարցում կպահպանվի զգալի լարվածություն: Ես համոզված չեմ, թե այստեղ Մեդվեդեւը կկարողանա վարել քաղաքականություն, որը զգալի չափով տարբերվի պուտինյան վարչակազմի քաղաքականությունից: Ես կարծում եմ՝ այն ժամանակ, երբ Ուկրաինան գնում է ՆԱՏՕ, ցանկացած ռուսական կառավարության համար դժվար կլինի ձեռքերը ծալած նստել:

*Չարդ* – Դուք Ռուսաստանը շատ տարիներ եք ուսումնասիրել: Արդի ռուսական պատմության մեջ Ձեզ ի՞նչն է ամենից շատ զարմացրել:

*Պատ.* – Ես կարծում եմ՝ կա երեք իրադարձություն, որոնք խորհրդային Միության հարցերով ամերիկյան փորձագետները չեն կանխատեսել եւ որոնք անակնկալ հանդիսացան: Առաջին իրադարձությունը՝ դա ԽՍՀՄ փլուզումն է: Երկրորդը՝ 1990-ական թվականների դրամատիկական իրադարձություններն են: Ես պետք է ասեմ, որ երկրորդ դեպքում ավելի քիչ եմ զարմացել: Ես սպասում էի երկարատեւ ու դժվարին վերափոխության, որը իդեալում պետք է հանգեցներ ազատական ժողովրդավարության ծնունդի: 1991-1992թթ. ես հրապարակեցի հոդված, որտեղ գրել էի, թե Ռուսաստանում մինչեւ ինչ-որ բան սկսի լավանալ, իրավիճակն անհամեմատ ավելի կվատանա, որ վերափոխումը շատ ժամանակ է պահանջում եւ կուղեկցվի վերելքներով ու անկումներով: Անձամբ ես առավել քիչ եմ զարմացել այն դժվարություններից, որոնց ԽՍՀՄ փլուզումից հետո բախվեց Ռուսաստանը, քան խորհրդային Միության փլուզումից:

Երրորդ իրադարձությունը՝ դա Ռուսաստանի վերելքի տեմպերն ու ծավալն են: Ես կարծում եմ, որ ո՛չ բուն Ռուսաստանում, ո՛չ նրա սահմաններից դուրս որեւէ մեկը նման բան չէր սպասում: 2001-2002թթ. ես հրապարակեցի «Ռուսաստանը բարձրանո՞ւմ է» վերտառությամբ հոդվածը: Այն ժամանակ ես ենթադրում էի, թե Ռուսաստանը կկարողանա բավականին արագ զարգանալ: Շատերն այս ենթադրությունը համարեցին չափից ավելի լավատեսական եւ անգամ ցնդաբանական: Սակայն Ռուսաստանի զարգացման տեմպերն ինձ համար էլ անակնկալ եղան:

*Չարք* – Ռուսաստանի զարգացման սցենարներից, որոնք Դուք առաջարկել եք «Ռուսաստանի այլընտրանքային ապագան մինչեւ 2017թ.» գեկույցում, ո՞րն եք համարում առավել հավանական:

*Պատ.* – Ես ավելի հակված եմ լինել զգուշավոր-լավատեսական: Այդ գեկույցում իմ նկարագրած երեք սցենարներից մեկը՝ դա կայունության եւ անընդհատ զարգացման սցենարն է, եւ այն անհամեմատ ավելի լավատեսական է, քան մյուս երկուսը: Անշուշտ, դա այն սցենարն է, որը ես առավել հավանական եմ համարում:

Գլխավոր պատճառն այն է, որ Ռուսաստանի բնակչության մեծ մասը ցանկանում է կայունություն ու բարգավաճում: Չնայած իմ համոզմունքին, թե Ռուսաստանն ավելի շուտ ավտորիտար, քան ժողովրդավարական երկիր է, Կրեմլի մարդիկ հասկանում են, որ իրենց լեգիտիմությունը կախված է բարգավաճման, տնտեսական աճի եւ կյանքի բարելավման համար ռուսաստանցիներին հնարավորություններ տալու (կամ տալու տպավորություն ստեղծելու) պետության ընդունակությունից: Այն ինձ լավատեսություն է ներշնչում: Սակայն, համակարգի էության եւ արտաքին գործոնների հանդեպ խոցելիության պատճառով, Ռուսաստանի համար օգտակար կլինեն, եթե ջանար խուսափել արտաքին ապակառուցողական իրադարձություններից:

Նախընտրական քարոզարշավի ժամանակ Մեդվեդեւը մեջբերեց Պյոտր Ստոլիպինին: Մի անգամ Ստոլիպինն ասել է. «Տվեք Ռուսաստանին կայունության 20 տարի եւ դուք կտեսնեք նոր Ռուսաստան»: Իհարկե, այն տեղի չունեցավ: Սկսվեց Առաջին աշխարհամարտը, եւ մեզ հիանալի հայտնի է, թե ինչ ուղով գնաց Ռուսաստանի պատմությունը: Բայց ես կարծում եմ, որ մեջբերումը միանգամայն տեղին էր: Տվեք Ռուսաստանին համեմատական կայուն աճի եւս երկու տասնամյակ, եւ մենք կտեսնենք ավելի բարգավաճ, աշխարհին լիովին ինտեգրված եւ ավելի կառուցողական Ռուսաստան:

**Washington ProFile**

## POST-KOSOVO. ՀՅՈՒՄԻՍԱՅԻՆ ԵՎՐՈՊԱ

### Ալեքսեյ Տերեշչենկո

Հյուսիսային Եվրոպայում մոտալուտ փլուզման վտանգի առաջ կանգնած են երկու պետություն՝ Մեծ Բրիտանիան եւ Բելգիան: Հյուսիսի պետությունների մեծ մասում տարածաշրջանային շարժումները կրում են հիմնականում ազգագրական բնույթ: Նիդեռլանդներում, Գերմանիայում ու Շվեյցարիայում դա, ըստ ամենայնի, կապված է նախեւառաջ նրա հետ, որ առկա քաղաքական համակարգի շրջանակներում տարածաշրջաններն արդեն իսկ ունեն լայն իրավունքներ եւ ինքնավարության հետագա ընդարձակման համար պայքարի անհրաժեշտություն չեն տեսնում:

Շվեյցարիայում անջատողական հակամարտություններ չկան: Չնայած ֆրանկախոսների եւ գերմանախոսների միջեւ տարածայնություններին, Ռոմանդիայի (ֆրանկալեզու Շվեյցարիայի) մշակութային ինքնավարությունից բացի, ոչ մի անգամ որեւէ այլ հարց չի ծագել:

Փոխարենը՝ մի քանի տասնամյակ տեւեց սոցիալական, կրոնական ու լեզվական հենքով հակամարտությունը Բեռնի բողոքական կանտոնում: 1979թ. կանտոնի հյուսիս-արեւմտյան հատվածն անջատվեց եւ առաջացավ Յուրա նոր կաթոլիկ կանտոնը: Սակայն պայքարը շարունակվում է, որովհետեւ կանտոնների միջեւ սահմանը կաթոլիկներին չի բավարարել: Չնայած նրան, որ հակամարտության բոլոր մասնակիցները լոյալ են եղել Շվեյցարական Համադաշնության նկատմամբ, սահմանների վերանայման փաստն առկա է:

Ավստրիայում միակ փոքրամասնությունը, որ իր մասին հայտարարում է, սլովեններն են, որոնք ապրում են Կարինտիայի հարավ-արեւելքում: Նրանց «Էնոտնա Լիստա» կուսակցությունը Ազատ Եվրոպական դաշինքի մասնակից է: Սակայն Կարինտիայում սլովեն բնակչության տոկոսը չափազանց աննշան է, որպեսզի նրանք որեւէ ակնառու դեր խաղան:

Գերմանիան, չնայած իր ծանր անցյալին, բավականին միատարր երկիր է: Միակ տարածաշրջանը, որտեղ առկա է նկատելի անջատողական շարժում, Բավարիան է՝ Գերմանիայի ամենահարուստ երկրամասը: Սակայն Բավարական կուսակցությունը 1962 թվականից խորհրդարան չի անցնում:

Ալեմանյան անջատողականությունը Երկրորդ աշխարհամարտից հետո ճանաչված շարժում էր: Խոսքը գնում էր Գերմանիայից

ալեմանների՝ Բաղենի, Վյուրթենբերգի ու հարեւան երկրամասերի բնակչության մի մասի անջատման եւ, ըստ ամենայնի, նույնալեզու եղբայրների՝ գերմանալեզու Շվեյցարիայի եւ ավստրիական Ֆորարլբերգ մարզի հետ նրանց միավորման մասին: Սակայն ներկայումս ալեմանյան շարժումից մնացել է սոսկ մշակութային բաղադրիչը:

Դանիան հավակնում է Ֆլենսբուրգ քաղաքին, որը գտնվում է Գերմանիայի տարածքում, բայց բնակեցված է դանիացիներով: Սա Շվեյցարիայի այն հողերի մնացուկն է, որոնք նվաճվել էին Բիսմարկի կողմից ու Երկրորդ աշխարհամարտից հետո վերադարձվել Դանիային: Եվրամիությունն ու Շենգենյան տարածությունն այս երկու պետությունների մտնելուց հետո կոնֆլիկտը խաղաղվել է, բայց մնում է հրատապ:

Նիդեռլանդներում միակ տարածաշրջանային շարժումը Ֆրիսլանդիա նահանգի տարածքում է: Սակայն խոսքը միայն մշակութային ինքնավարության մասին է: Վերջերս ֆրիզները ազգային փքրամասնություն ճանաչվեցին նաեւ Գերմանիայում՝ Դիտմարշ մարզում, որտեղ, ինչպես եւ Ֆրիսլանդիայում, շատերը մինչ այժմ տիրապետում են ֆրիզերեն լեզվին:

Ներկա պահին Եվրոպայի ոչ մի երկրում, անջատողականության առումով, չկա այնպիսի ծանր իրավիճակ, ինչպիսին Բելգիայում է: Բելգիացիների մեծամասնությունը խիստ հավանական է համարում երկրի տրոհումը Ֆլանդրիայի ու ֆրանկալեզու Վալոնիայի: Այն, անշուշտ, առաջին հերթին, պայմանավորված է Բելգիայի բարդ պատմությամբ:

Երբ 1830թ. Բելգիան Նիդեռլանդներից անկախություն ստացավ, նիդեռլանդական ամեն ինչ ենթարկվեց բռնությունների: Ընդ որում, պետության ղեկավարներն ուշադրություն չդարձրին այն իրողությանը, որ բնակչության կեսը (այսինքն՝ ֆլամանդացիները) խոսում էին նիդեռլանդերենի տարատեսակով: 100 տարի ֆրանսերենը դարձավ Բելգիայի միակ պետական լեզուն: Ֆրանկալեզու բնակչությունը գրավեց գերիշխող դիրքեր ինչպես քաղաքականության, այնպես էլ տնտեսության մեջ. Զարավային Բելգիան, իր երկաթահանքերով, դարձավ Եվրոպայի ամենագարգացած արդյունաբերական շրջանը: Արդյունքում՝ 19-րդ դարի վերջին էթնիկական դիմակայությանն ավելացավ սոցիալ-քաղաքականը. եթե բանվորական Վալոնիայում ընտրություններում հաղթում էին սոցիալիստները, ապա նահապետական Ֆլանդրիան միշտ դրսեւորում էր իր պահպանողականությունը: Ամենահետաքրքիրն այն է, որ նման տարանջատումը մինչ օրս պահպանվել է:

Կուտակված փոխադարձ վիրավորանքները, որոնք Երկրորդ աշխարհամարտին խորացան ֆլամանդացիների զանգվածային կոլաբորացիոնիզմով, հանգեցրին նրան, որ արդեն 40-ական թվականներին բարձրացվեց Բելգիայի ամբողջականության հարցը:

Այն ժամանակ հենց ֆլամանդացիների պահպանողականությունը թույլ տվեց Բելգիային պահպանել թագավորին՝ բելգիական միասնության գլխավոր երաշխավորին: Նիդեռլանդներն լեզուն իր կարգավիճակով հավասարեցվեց ֆրանսերենին:

Սակայն շուտով քաղաքական ու տնտեսական իրադրությունը խիստ փոխվեց: Ծանր արդյունաբերության կարելությունն ընկավ, եւ բելգիական տնտեսությունը մեծ չափով վերակողմնորոշվեց դեպի տրանզիտը, ինչը հանգեցրեց Չարավային Բելգիայի հետամնացության եւ Ֆլանդրիայի տարածքում գտնվող նավահանգիստների ծաղկման: Ներկայումս Ֆլանդրիան զգալիորեն ավելի հարուստ է, քան Վալոնիան, եւ անջատողականների հիմնական փաստարկներից մեկը (ֆրանկախոսների կողմից հալածանքների մասին հիշողության հետ միասին) «վալոն ծրիակերներին» կերակրելու ցանկություն չունենալն է: Այն ժամանակ, երբ Վալոնիայում ընդամենը 12 տոկոսն է արտահայտվել Բելգիայի տրոհման օգտին, Ֆլանդրիայում անկախության կողմնակիցները շուրջ 40 տոկոս են:

Գոյություն ունեն մի շարք կուսակցություններ, որոնք հանդես են գալիս Ֆլանդրիայի անկախության օգտին: Առավել ազդեցիկներից է «Ֆլամանս Բելանգ» ծայրահեղ աջ կուսակցությունը, որը Ֆլանդրիայի անկախության եւ Նիդեռլանդների ու Ֆրանսիական Ֆլանդրիայի հետ դաշնության ստեղծման կոչ է անում: Կուսակցությունն իր առջեւ դրել է նաեւ այլ նպատակներ. լիակատար եւ անվերապահ համաձայնություն բոլոր նրանց, ում մեղադրել են Չիտլերի հետ համագործակցության մեջ, ներգաղթի սահմանափակում, հատուկ կարգավիճակից ֆրանսերեն լեզվի զրկում եւ այլն:

Վալոնիայում, իր հերթին, կան կուսակցություններ, որոնք հանդես են գալիս Բելգիայից անջատման ու Ֆրանսիայի հետ միավորման օգտին: Սակայն դրա կողմնակիցների թիվը մեծ չէ:

Ըստ երեւոյթին, հիմնական գործոնները, որոնք պահում են Բելգիան քայքայումից, թագավորն է եւ Բրյուսելը: Թագավորին անվանում են՝ «միակ բելգիացին վալոնների ու ֆլամանդացիների երկրում», իսկ ֆրանկալեզու Բրյուսելը գտնվում է ֆլամանդական տարածքում: Միանգամայն անհասկանալի է, թե Բելգիայի փլուզման դեպքում ինչ պետք է անել Բրյուսելի հետ. ամենայն հավանականությամբ, Եվրոպայի մայրաքաղաքն այս դեպքում կվերածվի վալոնյան անկլավի կամ կլինի «ազատ քաղաք»:

Վալոն-ֆլամանդական հակասությունների խորապատկերի ներքո, սովորաբար, մոռանում են Բելգիայում եւս մեկ ազգային խմբի՝ գերմանալեզու բելգիացիների առկայության մասին:



1918թ., Առաջին աշխարհամարտի արդյունքում, Բելգիային միացվեց Էյփեն-Մալմեդի շրջանը, որտեղ բնակչության մեծ մասը գերմանացիներ են: Ներկայումս նրանք Բելգիայի բնակչության 5 տոկոսից ավելին չեն, բայց ցանկանում են, որպեսզի իրենց ճանաչեն որպես Բելգիայի չորրորդ իրավահավասար շրջան: Նրանք լարված հարաբերություններ ունեն ինչպես ֆլամանդացիների, այնպես էլ վալոնների հետ:

Վերջին տասնամյակներին անսպասելիորեն սրվեցին անջատողականության խնդիրները Մեծ Բրիտանիայում:

Շատ դարեր անգլոսաքսերը գերիշխել են Բրիտանական կղզիներում՝ ամեն կերպ հպատակեցնելով ու ճնշելով կելտերին: Այժմ կելտական մշակույթը՝ ժամանակակից երիտասարդության շրջանում ամենաշատ ժողովրդականություն վայելողներից մեկը, հզոր վերածնունդ է ապրում: Կելտական աշխարհի միասնության համար պայքարում է Կելտական լիգան, որը միավորում է «վեց ազգերի»՝ Իռլանդիան, Շոտլանդիան, Ուելսը, Բրետանը, Կոռնուոլը եւ Մեն կղզին: Նրա նպատակն է կելտերեն լեզվի զարգացումը, կելտական ժողովուրդների համագործակցության կազմակերպումն ու պայքարը նրանց քաղաքական, մշակութային, սոցիալական եւ տնտեսական ազատության համար:

Կելտական լիգայի առաջնահերթությունների թվում են Իռլանդիայի միավորումը, Լուար-Ատլանտիկ դեպարտամենտի վերադարձը Բրետանին եւ Շոտլանդիայի անկախությունը: Գործի է դրվել նաեւ Կանադայի, Պատագոնիայի եւ Ավստրալիայի կելտական սփյուռքը:

Կելտական աշխարհն այնքան հրապուրիչ է, որ Գալիսիան ու Պադանիան եւս ձգտում են կապ գտնել կելտերի հետ:

Մեծ Բրիտանիան հայտնվել է ծանր դրության մեջ, քանզի իր տարածքի բոլոր անջատողական շարժումները կելտական են:

Դրանցից ամենահինը եւ ամենաճանաչվածը Օլստերն է: 1921թ., երբ Իռլանդիան ստացավ անկախություն, Օլստերի ինը կոմսություններից վեցը մնացին անգլիացիների իշխանության ներքո: Օլստերն աստիճանաբար բաժանվեց երկու անհաշտ ճամբարների՝ ազգայնական կաթոլիկների եւ ունիոնիստ բողոքականների («օրանժիստներ»), որոնք վերջին հաշվով վերածվել են երկու ինքնամոտի ու միմյանց նկատմամբ թշնամական համայնքների: Անցյալ դարի 60-90-ական թվականներին Իռլանդական հանրապետական բանակն անկախության հասնելու նպատակով ահաբեկչական գործողություններ էր անցկացնում: Արդյունքում՝ զոհվեց շուրջ 4 հազար մարդ: Կրակի դադարեցման մասին համաձայնագիրը կնքվեց 1997թ.: Արդեն այն ժամանակ ձեռք բերված փոխզիջման համաձայն, օլստերցիները կարող են ընտրել բրիտանական կամ իռլանդական քաղաքացիություն: 1998թ. Յու.Ս. Իռլանդիան ունեցավ իր Օրենսդիր

ժողովը: Այնուամենայնիվ, տարածաշրջանը հեռու է խաղաղությունից, եւ շատերը շարունակում են հանդես գալ Մեծ Բրիտանիայից անջատման ու Իռլանդիայի հետ միավորման օգտին: Ընդ որում, վերջին երկու տասնամյակներին երեւան են եկել մի շարք շարժումներ, որոնք հանդես են գալիս Օլստերի լիակատար անկախության՝ նրա համար «երրորդ ուղու» օգտին:

Սակայն այսօր իրավիճակն անհամեմատ ավելի լուրջ է Շոտլանդիայում:

Անջատողական Շոտլանդական ազգային կուսակցությունը շոտլանդական խորհրդարանի ընտրություններին հավաքեց ձայների 37 տոկոսը, ինչը ցույց է տալիս, թե հասարակության մեջ որքան ժողովրդականություն են վայելում անկախության գաղափարները: «Independence First» շարժումը պահանջում է հանրաքվեի անցկացում եւ շոտլանդական անկախ պետության ստեղծում: Իր դերն է խաղում նաեւ Զյուսիսային ծովում, Շոտլանդիայի ափերի մոտ գտնվող նավթային շելֆի առկայությունը:

Անջատման հակառակորդներն ընդգծում են այն դերը, որ Բրիտանական կայսրության ու Զամագործակցության կայացման գործում խաղացել են շոտլանդացիները եւ այն ազդեցությունը, որ նրանք կարող են ունենալ համաշխարհային գործերում՝ մասնակցելով մեծ տերության կառավարմանը:

Ուելսում անկախության գաղափարն առայժմ հրապուրում է լսարանի մոտ 12 տոկոսին, բայց այն հետզհետե աճում է:

50-60-ական թվականներին Ուելսում գոյություն ունեին մուլմիսկ մի քանի ահաբեկչական կազմակերպություններ, որոնք պայթեցնում էին ջրմուղներն ու էլեկտրահաղորդման գծերը: Այժմ ուելսյան շարժումը գործում է սահմանադրական շրջանակներում:

Ներկայիս Մեծ Բրիտանիայում, ըստ երեւույթին, ամենազարմանալի անջատողական շարժումը՝ դա Միացյալ Թագավորությունից Անգլիայի անկախության համար շարժումն է: Այն խթան ստացավ 1998թ. հետո, երբ Շոտլանդիան, Զյուս. Իռլանդիան եւ Ուելսն ստացան իրենց Օրենսդիր ժողովները: Անգլիացիներն իրենց անարդարացիորեն շրջանցված են զգում, եւ դա հարեւաններից ազատվելու ցանկություն է ծնում, որոնք իրենց ներքին որոշումներն ինքնուրույն են ընդունում, իսկ համաբրիտանական խորհրդարանի որոշումների վրա կարողանում են ազդել:

Վերջին տարիներին մեծ թափ է հավաքում ինքնավարական շարժումը Կոռնուոլում, որտեղ կելտ բնակչությունը (որը մինչեւ վերջ չի ուժացվել) ապրում է իր մշակույթի ու լեզվի վերածնունդը: 2001թ. Կոռնուոլի բնակչության 7 տոկոսն իրեն ընդունեց ոչ թե բրիտանացի, այլ կոռնուոլցի:

Կոռնուոլի անկախության մասին խոսք չի գնում, սակայն տեղի բնակչությունը պահանջում է ճանաչել իրեն որպես բրիտանական կղզիների հիմնդիրը բնիկ ժողովուրդ եւ ունենալ սեփական Օրենսդիր ժողով: Գոյություն ունեն առանձին ահաբեկչական կազմակերպություններ, որոնք սպառնում են ամեն «անգլիականին», բայց առայժմ իրենց սպառնալիքները գործի չեն դրել:

Անջատողական շարժումներ կան նաեւ Մեն կղզում, որը Եվրամիության կազմում չէ ու հասել է նրան, որ կղզի մտնելու համար հարկավոր է մուտքի առանձին արտոնագիր: Կան անջատողականներ եւ Ուայթ կղզում, որոնք վիճարկում են 1293թ. անգլիական թագավորին կղզիների վաճառման սահմանադրականությունը: Սակայն, նրանց ժողովրդականությունը փոքր է:

Սկանդինավյան երկրների տարածքում գոյություն ունի երկու ճանաչված անջատողական տարածաշրջան: Դրանք Ֆարերյան եւ Ալանդյան կղզիներն են:

Ի տարբերություն Իսլանդիայի, Ֆարերյան կղզիները չկարողացան Դանիայից անկախություն ստանալ: Թեեւ 1946թ. հանրաքվեին ֆարերցիների մեծամասնությունը արտահայտվեց անկախության օգտին, դանիական թագավորը դրեց իր վետոն՝ պատճառաբանելով, թե հանրաքվեին մասնակցել է կղզիների բնակչության սոսկ երկու երրորդը: Այնուամենայնիվ, ֆարերցիներին հաջողվեց հասնել սեփական լեզվի ու դրոշի ճանաչմանը:

Ֆարերյան կղզիները հրաժարվեցին մտնել Եվրոպական Միություն՝ այդպիսով խուսափելով ձկան որսի քվոտաներից: Ներկայումս ֆարերցիների շրջանում անկախության կողմնակիցները կազմում են բնակչության շուրջ կեսը: Ֆարերյան կղզիներ լողացող ցանկացած նավաստի գիտի, որ պետք է խուսափել դանիական դրոշներից եւ ավելի լավ է խոսել անգլերենով:

Ալանդյան կղզիները Ֆինլանդիայի տարածք են՝ բնակեցված առավելապես շվեդներով: Նրանք ունեն լայն ինքնավարություն, սեփական փոստային նամականիշներ ու ոստիկանություն: «Ալանդյան կղզիների ապագա» անջատողական կուսակցության ժողովրդականությունը հետզհետե աճում է. վերջին ընտրություններին նրանք ստացան քվեների 8 տոկոսը:

Գրենլանդիայի համար, որին լիովին բավարարում է իրեն տրամադրված լայն ինքնավարությունը, անկախության հարց չկա (նա մույնպես Եվրամիության կազմում չէ):

Վերջում՝ տարածաշրջանային երկու շարժումների մասին, որոնք ավելի շուտ կրում են մշակութային-լուսավորչական բնույթ: Դրանցից

մեկը Սկանիան է, որն իր մեջ ընդգրկում է Հալանդը, Բլեքինգեն եւ Սկոնեն՝ Հարավային Շվեդիայի երեք նահանգները, որոնք ընդհուպ մինչեւ 17-րդ դարը մնացել են դանիական իշխանության տակ, ինչպես նաեւ դանիական Բոռնհոլմ կղզին: Պայքարը գնում է տարածաշրջանային մշակութային ինքնության վերականգնման համար:

Մյուս շարժումը էթնիկական է: Խոսքը սաամների մասին է, որոնք բնակեցնում են Նորվեգիայի, Շվեդիայի, Ֆինլանդիայի ու Ռուսաստանի հյուսիսային շրջանները: Անցյալ դարի 80-ական թվականներին ստեղծվեցին սաամ ժողովրդի ազգային դրոշը եւ օրհներգը, իսկ 1989թ. Նորվեգիայում ծնունդ առավ առաջին սաամական խորհրդարանը: Միաժամանակ, ներկա պահին, սաամների հնարավորությունները խիստ սահմանափակ են՝ նրանց չափազանց փոքրաթիվության պատճառով:

**apn.ru**

## Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Գազիկ Տեր-Հարությունյան ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄՆԵՐԸ ԵՎ ԼԴՀ-Ն .....	1
Ռուբեն Մելքոնյան ՇԱՀԱՐԿՈՒՄՆԵՐ ԾՊՏՅԱԼ ՀԱՅԵՐԻ ԽՆԴՐԻ ՇՈՒՐՋ .....	6
Սարգիս Հարությունյան ԱԴՐԲԵՋԱՆ. ԷՆԵՐԳԵՏԻԿ ՆՈՐ ՎԵՐԵԼՔԻ ՀԵՌԱՆԿԱՐԸ .....	11
Արաքս Փաշայան ԻՍԼԱՄԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐ ԱԴՐԲԵՋԱՆՈՒՄ .....	16
Սեւակ Սարուխանյան ԻՐԱՆ. ՔԱՂԱՔԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐ .....	21
Լիլիթ Հարությունյան ԼԻԲԱՆԱՆԸ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՃԳՆԱԺԱՄԻ ՀԱՂԹԱՀԱՐՄԱՆՆ ԸՆԴԱՌԱՋ .....	25
Ն. Տեր-Օգանով ԳԱԶԱՅԻՆ OPEC. ԻՐԱՆԻ ԵՎ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԱՇԽԱՐՀԱՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԱՇՎԱՐԿՆԵՐԸ .....	30
Էնդրյու Կաչինս ՌՈՒՍԱՍՏԱՆ. ԶԱՐԳԱՑՄԱՆ ՍՑԵՆԱՐՆԵՐ .....	34
Ալեքսեյ Տերեշչենկո POST-KOSOVO. ՀՅՈՒՄԻՍԱՅԻՆ ԵՎՐՈՊԱ .....	38

*Շապիկին պատկերված է տեսարան Վանա լճից.  
հեռվում՝ Արտուս լեռը*

«ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ», Հայաստանի  
Հանրապետական կուսակցության հրատարակություն  
**Խմբագրական խորհուրդ**  
Երեւան, 375010, Սելիք-Աղամյան 2: Հեռ. 58 04 91, 58 04 83:  
Էլ. փոստ՝ hanrapetakan@hkh.am:  
Հիմնադիր՝ Հայաստանի Հանրապետական կուսակցություն:

Թուղթը՝ օֆսեթ, ֆորմատը՝ 70×108 1/16:  
Պայմանական 3,5 մամուլ: Տպաքանակը՝ 1000:  
Տառատեսակը՝ «Arial Armenian» եւ «Vs Helvetica»:  
Վկայական՝ ՕՄՍ 000176:  
Տպագրվել է «Ամարաս» տպարանում: